

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԼԱ ԿԱՊՈՒՏԻԿԱՆ

ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Ամեն անգամ Գրողների տուն մտնելիս, երբ աչքս դիպչում է պատերին փակցված մեր հանգուցյալ գրողների լուսանկարներին, որոնց բոլորին էլ տեսել եմ կենդանության օրոք, ու բոլորն էլ ինձ նայում են հին ծանոթի հայացքով, թվում է ամենից երկար ինձ նայում են երկու հոգի և տխուր հանդիմանում. «Տեսնո՞ւմ ես մենք չկանք, իսկ դու լուր ես...»: Այդ երկուսը Նաիրի Զարյանն ու Զրաչյա Քոչարն են:

Զարյանի մասին ես այնքան էլ չեմ լուել: Գրողի 80-ամյակին, երբ գրաքննադատ Վազգեն Սնացականյանի և այլոց ջանքերով ծայր էին առել զրպարտիչ խոսակցությունները Զարյանի մասին, ես հոբելյանական հանձնաժողովի նախագահն էի և ամեն կերպ աշխատում էի, որ նրա հետմահու հոբելյանը ստանա անհրաժեշտ հնչեղություն: Հանդիսավոր երեկոներ եղան Երևանում, Գյումրիում, շրջանային կենտրոններում, իսկ Մոսկվայում՝ Գրողների տան մեծ դահլիճում, նույնպես նշվեց հոբելյանը՝ պառնալից հանդիսավորությամբ, Խորհրդային գրողների միության այդօրյա ղեկավար Ալեքսեյ Սուրկովի նախագահությամբ:

Թվում էր՝ այդ հոբելյանը, հրատարակվող զարյանանպաստ հուշերն ու հոդվածները, արդարամիտ մենագրությունները պետք է ցրեին Նաիրի Զարյանի շուրջ չարամտորեն խտացրած սևը: Բայց այդպես չեղավ. ընդհակառակը, գնալով այդ սևը թանձրացավ, քանի որ որոշ թանձրամիտ, ճշմարտության հետապնդողի քղամիդի հազած, բայց ներսից բազում արատների տեր մարդիկ շարունակեցին առավել կողմնապահությամբ պրպտել անցյալը և 1937 թվի ողբերգության պատճառն ու հետևանքները վերագրել մի անձի՝ անտեսելով բոլոր մյուսների նույնատիպ մեղադրանքները: Այդ թանձրացյալ սևը իր ծիրի մեջ առավ Ն. Զարյանի այդ տարիների մտերիմ ընկերոջը՝ Զրաչյա Քոչարին: Եվ եթե Ն. Զարյանի մասին ես գրել ու խոսել եմ հաճախ, տպագրել եմ բավական ընդարձակ խոհագրություն իմ «Էջեր փակ գգրոցներից» գրքում, ապա Քոչարի մասին համարյա չեմ գրել: Եվ հիմա, թեև վատառողջ եմ, բայց իմ հոգու պարտքն եմ համարում թղթին հանձնել իմ իմացածը, որովհետև առաքինություն չէ տեսնել, թե ինչպես է անտեսվում Զրաչյա Քոչարի վիթխարի դերը մեր ժողովրդի հոգևոր զարթոնքի մեջ, երբեմն էլ աղավաղվում նրա իրական կերպարը, - տեսնել ու լուել այդ մասին:

Հազիվ 13-14 տարեկան էի, երբ սկսել էի երևալ Երևանի Լենինի հրապարակում

(այսօր Զանրապետության հրապարակ) գտնվող Գրողների միության շենքի մոտերքում: Բնակիրությամբ այնքան էլ երկշտու չէի, բայց սևաքար այդ շենքը ինձ համար մի անհասանելի տաճար էր, անմատչելի բերդ, ամրոց, որի շենին երկյուղում էի ուղք դնել: Ուղք դրեցի, երբ Ալազանը իր խմբագրած «Գրական թերթում» առաջին անգամ տպագրեց իմ «Հասունություն» բանաստեղծությունը: Այսպիսով՝ գրական աշխարհի մտա բազմաթիվ երիտասարդների «տիրություն» արած՝ Ալազանի կնքահայրությամբ, բայց պատանեկան երկյուղածությունն այդ աշխարհի նկատմամբ մնաց շատ երկար: Այդ երկյուղածությունն տարածվում էր գրողների հետ աղերս ունեցող ամեն ինչի վրա՝ շենքի, սենյակների, փողոցի նեղիկ դահլիճի, այդ դահլիճում տեղի ունեցող երեկոների, մեծ ու փոքր գրողների վրա: Նրանց մեջ էր բարձրահասակ, հաղթակազմ, ծանր-ծանր քայլվածքով ու պահվածքով, Մաքսիմ Գորկու նման՝ սև, թավշյա, փակ օծիքը մի կողմի վրա կոճկած ու մեջքն էլ բարակ կապով կապած՝ «կոստյուրուտ-կա» կոչվող վերնաշապիկով մի երիտասարդ՝ Զրաչյա Քոչարը: Նա դեկադարում էր երիտասարդ գրողների սեկցիան, ու ես էլ, բնականաբար, դարձա այդ սեկցիայի եթե ոչ անդամը, ապա պարապմունքների մշտական մասնակիցը: Թե ինչ էր պարապմունքների բովանդակությունը, հիմա չեմ հիշում, բայց հիշում եմ՝ հոգին նոր բացվող աղջնակի միամտությամբ հրապուրված էի սեկցիայի նախագահով, և մեծ եղավ երջանկությունս, երբ Գրողների միության առաջին համագումարի ժամանակ, որ տեղի էր ունենում Կուլտուրայի տան դահլիճում (այժմ՝ Առոժ Բաբաջանյանի անվան դահլիճ) կողքիս նստած էր ինքը՝ Զրաչյա Քոչարը:

Պատանեկան հիացումներով լցված տարիներս էին: Հիացած էի ամեն ինչով՝ օր օրի իմ հիմաց բացվող արար աշխարհով, բնությամբ, մարդկանցով, մանավանդ Կենտկոմի առաջին քարտուղար Ադասի հանջյանով: Նա վերջերս էր այցելել մեր դպրոցը, և գրականության ուսուցիչը՝ ընկեր Սիմակը, որ ուղեկցում էր նրան, դասարանի առաջ մատնացույց անելով ինձ, ասել էր. «Սա էլ մեր բանաստեղծուհին է, Գրիգոր Զոհրապի մասին ռեֆերատ գրողը. Սիլվա Կապուտիկյան»։ «Կապուտիկյան»,- ճշգրտել էր հանջյանը ազգանունը՝ կարծես ինչ-որ բան հիշելով: Ես ենթադրեցի, որ ինձ գիտի երևի, և այս ենթադրությունը ինձ ներքնապես կապել էր նրան, հարազատացրել: Ահա թե ինչու երբ համագումարում հայտարարվեց, թե ծայրը տրվում է Ադասի հանջյանին, սիրտս թունդ եղավ: Լսում էի նրան շունչս պահած, ամեն մի բառն ու ժեստը կլանելով, հայացքս իր դեմքից պահի իսկ չկտրելով, բայց արի ու տես, որ կողքիս նստած Զրաչյա Քոչարը անփութ խոսում էր իր մյուս կողքի հարևանի հետ, սրամտում... Իմ վիրավորվածությունը անսահման էր, այնքան խորը, որ համագումարից դուրս եկա մի մեծ բան կորցրածի զգացողությամբ: Քոչարի նկատմամբ ունեցած ակնածանքս, հրապուրվածությունս, որ, ո՞վ գիտե, գուցե փոխարկվեց սիրո, ի դերն էր անցել...

Օ՛, պատանի սրտի առաջին թրթիռներ, որքա՛ն նրբազգաց եք դուք, որքա՛ն դյուրաբեկ...

Սկսած 1933 թվականից մինչև 1944 թ. հունիսը եղավ իմ կյանքի ամենամղդ-

ծավանջային ժամանակահատվածը, որը թեև չի մտնում Հրաչյա Քոչարին վերաբերող հուշապատումի ծիրի մեջ, բայց ես կփորձեմ դրա վրա փոքր-ինչ կանգ առնել, որովհետև ուրիշ անգամ հազիվ թե հասցնեմ պատմել այդ մասին...

1936 թվականի ուսումնական տարեվերջին Երևանի Կրուպսկայայի անվան դպրոցը գերազանց ավարտելուց հետո, ինձ և մեր դասարանի երկու ուրիշ գերազանցիկների Հայաստանի այդօրյա լուսժողկոմ Արտո Եղիազարյանը պարզևստրեց Մոսկվայում բարձրագույն կրթություն ստանալու որոշումով ապահովելով ճանապարհածախսը: Այնքան մեծ էր Մոսկվայում սովորելու ցանկությունս, որ մայրաքաղաք մեկնեցի սեպտեմբերի փոխարեն հունիսի վերջերին: Դիմումս Մոսկվայի ՄՈԴԱՄ (Փիլիսոփայության և գրականության ինստիտուտ) ներկայացրեցի և գերազանցիկի համագամանքով առաջին իսկ օրից համարվեցի ինստիտուտի ուսանող: Տեղավորվեցի Ուսաշովկա փողոցի վրա գտնվող հանրակացարանում: Առաջին անգամ էի բոլորովին մենակ ու երկար ժամանակով բացակայում տնից: Առավոտից երեկո թափառում էի անժամոք քաղաքի փողոցներով, խելքս կտրածի չափ այցելում էի իմացածս տեսարժան վայրերը՝ Տրետյակովյան պատկերասրահ, Կենդանաբանական այգի, Մեծ թատրոն, Գորկու անվան կուլտուրայի և համգասի գրոսագի: Բայց մի երկու-երեք շաբաթից հետո Երևանի կարոտը սկսեց խեղդել ինձ և գնալով այնքան սաստկացավ, որ սեպտեմբերին, երբ ինստիտուտի պարապմունքները արդեն հունի մեջ էին ընկնում, անկարող դիմանալու այդ կարոտին, որոշեցի վերադառնալ Երևան: Թեև սեպտեմբերի 10-12 էր արդեն, բայց քանի որ գերազանցիկ էի, ընդունվեցի Երևանի պետական համալսարան և դարձա բանասիրական ֆակուլտետի ուսանող:

Հիմա, երբ կյանքիս վերջում մտովի անդրադառնում եմ անցյալին, հաճոգվում եմ, որ ճակատագրական, վերուստ սահմանված մի կարգադրիչ ուժի միջամտություն կար Երևան վերադառնալու իմ այդ հանկարծահաս վճռի մեջ: Միջամտություն, որ կանխորոշեց իմ ողջ կյանքի հետագա ընթացքը: Նախ՝ հեռուներում սովորելու և հայրենի հողի՝ Հայաստանից, խորթանալու հեռանկարը չիրագործվեց, և ես բարենպաստությունը ունեցա սովորելու Երևանի համալսարանում, շարունակելու հոգևոր սնուցումս հայրենի հողից, հայրենի միջավայրում և դառնալու ըստ ամենայնի հայաշունչ բանաստեղծ: Եվ չնայած ոչ միստիկ, ոչ ճակատագրապաշտ էության՝ ես ավելի եմ հաճոգվում, որ վերուստ կանխորոշված էր մահ Զովհաննես Ծիրագին հանդիպելու, նրա հետ կյանք կապելու, երեխա ունենալու իրողությունը: Այդ իրողությանը դիմադրում էի անփորձ աղջկա իմ ողջ բնազդով, Ծիրագի առատաբուխ տաղանդին ուղեկցող անկառավարելի բնավորության տխուր ապացույցները ամեն պահ ինձ վրա զգալով, համատեղ կյանքի անհնարիմության հաճոգումով. այդ մասին զգուշացնում էին մահ պոետի լավ ճանաչողները, նույնիսկ Ավետիք Իսահակյանը: Վերջինս, իմանալով Ծիրագի հետապնդումների մասին, հարմար չհամարելով անմիջապես ինձ հետ խոսելը, կնոջը՝ տիկին Սոֆիկին, ասել էր. «Հասկացրու էդ խեղճ աղջկան, որ հեռու մնա էդ խելառից: Մեղք է, կկործանվի»:

Ես այդ կործանման ամբողջ տարողությունը գիտակցում էի, բայց ոչ մի բան՝

հանդիպումներից հնարավորին չափ խուսափելը, համալսարանում տարկետում վերցնելու մտադրությունը (մենք սովորում էինք նույն կուրսում), ազգականիս՝ բժիշկ Կարապետ Բեգլարյանի տանը մեկ ամսից ավել թաքնվելը, արցունքներով, արծակ ու չափածո տողերով իմ խնդրել-աղաչելը, որ Շիրազը խնայի իմ պոետական ապագան ու թողնի-հեռանա ինձնից, - ոչինչ չօգնեց այդ, ինչպես ասում են, «թուղթ ու գիր» խափանելուն: Վերուստ գրվածը պետք է կատարվեր և կատարվեց...

Իմ այս երկարատև կյանքի ընթացքում բազմաթիվ առիթներ են եղել, հարց-մուցքներ ու հորդորներ գեթ մասամբ պատմել Շիրազի հետ առնչվող տարիների մասին, բայց ես, բացի թղթերումս պահած մի երկու բանաստեղծությունից, որոնք հոգու ճիչ են, դառնությունների կուտակումներից դուրս նետվող ժայթք, քան թե բանաստեղծություն, ոչինչ եմ պատմել ո՛չ բանավոր, ո՛չ գրավոր, թեև գիտեմ, որ հակառակ կողմը գրքերում տպագրել և արխիվում էլ թողած կլինի բազում չափածո ու արձակ տողեր, նամակներ, որտեղ դժբախտ սիրո արցունքներ են հորդում՝ շաղախված հերյուրանքներով ու նգովքներով, և որոնք հալած յուրի տեղ կընդունվեն շատերի կողմից: Սակայն այս ամենը հերքելու, ճշմարտությունը վեր հանելու անհրաժեշտությունն անգամ ինձ չի մղել գրիչ վերցնելու և թղթին հանձնելու իրական պատկերը... Ու հիմա էլ, երբ առջևում ժամանակ չի մնացել, դարձյալ դժվարանում եմ գործի անցնել, ուղեղս ասես արգելակվում է, դիմադրում է միտքս, սիրտս, թուղթս, գրիչս, ողջ ներաշխարհս: Ձգում եմ, որ չեմ ցանկանում, որ մեր պոեզիայի երկու ճանաչված մարդկանց կյանքի անփառունակ հետմախրոշերը արևերես հանվեն: Այդպես վարվելով՝ ես խնայում եմ ոչ միայն արտակարգ տաղանդով օժտված, ժողովրդի լայն շերտերի կողմից սրբազործված բանաստեղծին, այլ խնայում եմ նաև ինձ, քանզի պատմելով անպատմելին՝ չեմ ուզում, որ ընթերցողն ինձ տեսնի այդպես գետնահար փիճակում, արժանապատվությունս այդպես տմարդորեն տրորված...

Ուստի ես, չնայած վերևի տողերում արտահայտած մտադրությանս, ծալում, մի կողմի վրա եմ դնում այդ մտադրությունս իրագործելու կոչված մի երկու սևագիր էջերը ու չգիտեմ՝ երբևէ ի մի կիբերե՞մ դրանք, թե՞ ոչ... Այս անելով հանդերձ, խորունկ ցավով, ավստասանքով, ինքս ինձ չհավատալով, և այնուամենայնիվ, հավատալով՝ թղթին եմ հանձնում հետևյալը. եթե ես հայ գրականության մեջ հիշատակության եմ արժանացել բանաստեղծուհի, ժողովրդի ճշմարտության նկիրյալը, գուցեև ընտրյալը լինելու համաժամանքով, ապա իմ կանացի, մոր արտառոց, ոչ մի չափուկչոփ մեջ չտեղավորվող, սովորական մոտեցումներով չվերծանվող ճակատագրով եղել եմ մի ուրիշ կարգի ընտրյալ, աշխարհի աչքից ծածկված, ինքն իր խարույկի վրա այրվող տարբեր մի նահատակ, որը տարել է այդ հոգևոր ողջակիզումը անմռունչ մի համակերպումով՝ համարելով դա դարձյալ ի վերուստ, նախախնամության ձեռքով տնօրինվող ընթացք, որը առաքելություն ուներ հավասարակշռելու, նույնիսկ հակադարձելու իմ ստեղծագործական արդյունավոր կյանքի պարզևած անսահման երջանկությունը:

Այս դաժան առաքելությունը սկսվեց Շիրազին հանդիպելու պահից ու շարունակվում է մինչև օրս, երբ այն փոխանցվել է որդուս, թոռներիս՝ ավելի բարդ, դրսից՝

աննկատ, բայց ավելի անարդար, ինձ ավելի խորքից խոցոտող կիրարկումներով...

Ի՞նչ իմանաս, գուցե Աստված այդպես տնօրինեց նրա՝ համար, որ աշխարհի գալիս լիարժեք մի բանաստեղծուհի, «որ մի էջ հայոց երգի մատյանում լցվի հավերժով հառաչով կնոջ»:

1941 թ. հունիսի 8-ին հոգու ու մարմնի ժանրածանր երկունքով ծնվեց իմ տղան Արայիկը: Ծնվեց բերելով իր հետ լույս, օրինություն, մայրական երանություն, բանաստեղծություն, բայցև հավելյալ տառապանք ու գոփություն, անձնական կյանքի հավելյալ խառնաշփոթություն... Նույն ամսին պայթեց Հայրենական մեծ պատերազմը՝ իր օվկիանաչափ հորձանքի տակ առնելով վիթխարի մի երկիր, հունը գտած լայնածավալ մի առօրյա, ապրելու սովորական կերպ ու կշռույթ, և այդ օվկիանաչափ հորձանքի դիմաց երկրորդական թվացին ամենայն հավելյալ տառապանք ու գոփություն, անձնական կյանքի հավելյալ խառնաշփոթություն... Առաջնային դարձավ պատերազմը՝ իր բոլոր արհավիրքներով, տանկերով ու թնդանոթներով, ահա-կալած ցերեկներով ու լուսաբողարկված գիշերներով, նահանջների դառնությամբ և վերագրավված մի փոքրիկ գյուղի համար մանուկ ցնծությամբ: Խռովքների այս համատարած ալեկոծության մեջ էր նաև Հայաստանը, զինվորյալ էր ողջ հայ ժողովուրդը՝ ծեր թե մանուկ, կին թե տղամարդ, գյուղ թե քաղաք, բանաստեղծները, արտիստները, նկարիչները: Օղջ վրձնում էր ռազմի երգերով, «Հայն հայրենականով» և «Կործանեցե՛ք Բեռլինով», «Ղեպի կառավարանով» և «Մարտիկի երգով», «Ո՛րն է, Բաբո՛ւ, մեր հայրենիքով» և «Մենք խաղաղ էինք մեր լեռների պեսով»: Ռադիոն, թերթերը, թատրոնները, ակումբները, դպրոցները, գործարանները, անտղամարդ կոլտնտեսությունները, աշխատանքային ընդմիջումների ժամանակ հապճեպ հավաքած միտինգները շնչում էին պատերազմով և դաժանորեն ուշացող, անլուր տառապանք ու զրկանքներ, հոգու ու ժ ու հատնում պահանջող հաղթանակի սպասումով: Հիշում եմ Գրողների տանը այսպիսի շնչառատ միտինգներից մեկի ժամանակ արդեն տարիքն առած Ղերենիկ Ղեմիրճյանի խորիմաստ խոսքերը. «Մենք կհաղթենք, որովհետև պարտվելը սալելի դժվար է, քան հաղթելը...»:

Եվ այս, համատարած տարուբերումների մեջ առանձնապես հնչում էր պատերազմի հենց առաջին օրից ռազմաճակատ մեկնած, զինվորական թղթակից Հրաչյա Քոչարի ծայրը, հանրապետության պարբերականներում հաջորդաբար տպագրվող նրա ակնարկները՝ ուղարկված հենց առաջին գծից, մարտերի ծուխ ու վառողով բուրոդ, կենդանի, անմիջական: Ամենքը, այդ թվում նաև ես, սպասում էինք այդ ակնարկներին ճիշտ այնպես, ինչպես զինվորի մայրը, կինը, երեխաներն էին սպասում կռվող հարազատի եռանկյուն նամակներին: Նահանգի և պարտությունների այդ ծանր տարիներին Քոչարի ակնարկները բաղձալի դեսանտի նման իջնում էին մարդկանց վիատ հոգիներին, հույս ու վստահություն էին ճառագում այնտեղ, հաղորդում հեղինակի անասան համոզվածությունը հաղթանակի նկատմամբ:

Այդ համոզվածությունը միայն Քոչարինը չէր, այլ իր ժամանակինը, որ ներառում է 1920-30-ական թվականները ու նաև Հայրենական պատերազմի տարի-

ները: Հայտնի է, որ ժամանակն էլ, ինչպես ամեն մի անձ, ունի իր բնավորությունը, բնավորության առանձնահատկությունները, որ պետք է նկատի ունենալ անհատի կյանքն ու գործը գնահատելիս: Հրաչյա Քոչարի և նրա սերնդակիցների ապրած ժամանակի բնավորության առանձնահատկությունը մոլեռանդ համոզվածությունն էր, անվերապահ հավատը հանդեպ իրենց դավանած գաղափարը, իրենց ճշմարտությունը: Այստեղից էլ նրանց՝ առարկություն չհանդուրժող հաստատումներն ու ժխտումները, որ երբեմն հասցնում էին սխալների ու մոլորությունների՝ երևույթները և մարդկանց գնահատելիս: Ոչ պակաս դեր ունի նաև գրողի, գործչի անձնական բնավորությունը, խառնվածքը: Ծնված Ալաշկերտի նահանգի Ղուժլիբուջաղ գյուղում՝ Քոչարը իր մեջ կրում էր հողի ուժը, հողի մարդու հիմնավորությունը: Լավատես, առողջ հոգի ուներ ու նաև տիրակալան, համառ, անտեղիտալի: Պակասը լրացնում էր ժամանակի բերած համոզվածությունը: Սիա այս լավատեսությունը և համոզվածությունը կա նրա գործերում, պատերազմական ակնարկներում, «Մեծ տան զավակները» վեպում, կենաց սկզբի առաջին իսկ քայլերում ու հետագա ողջ ճանապարհին:

Քոչարը պատերազմից վերադարձավ առավել ամրացած ու այրացած, Մեծ հաղթանակի իր բաժին փայլն ու շուքը վրան: Փոխված էր նաև շրջապատի ու նաև իմ վերաբերմունքը կռիվ դաշտերից վահանով վերադարձած ռազմիկ-գրողի նկատմամբ: Պատանեկան հրապուրվածությանն փոխարինել էր խորը հարգանքը, կարելի է ասել պատկառանքը:

1946-47 թվականներն էին, ժղանովյան տխրահռչակ զեկուցումների, արվեստի, գրականության մեջ անկումայնության, սուրբեկտիվիզմի դեմ հայտարարված պայքարի տարիները: Հայրենասիրական, անձնական լիրիկայի վրա դրված արգելքները, որ Հայրենական պատերազմի ընթացքում զգալապես թուլացել էին՝ հող ստեղծելով «Վարդանանքի», «Պապ թագավորի», «Արա Գեղեցիկի», թարմաշունչ քնարերգության համար, նորից սկսեցին սեղմվել: Սեղմիչների տակ էր ընկել նաև իմ նոր բանաստեղծությունների ձեռագիր ժողովածուն, ու խստաշունչ խմբագիրների գրիչը մերժող նշաններ էր դնում տխրության երանգ ունեցող տողերիս վրա: Իմ ուրախությանը չափ չկար, երբ ինքը՝ Հրաչյա Քոչարը, որոշել էր կարդալ գիրքս և խմբագրել: Ստածում էի, թե ով-ով, բայց նա կհասկանա և ձեռագիրը անխաթար կուղարկի տպագրության... Բայց ի՞նչ անխաթար: Հաղթական բանակի հաղթական հրամանատարը համոզված էր, որ հաղթական երկրի բանաստեղծն էլ, ինչպես զինվորը, չպետք է ընկրկի անձնական ցավի ու տվայտանքների առաջ, չպետք է հանձնվի սիրո անորոշ տազնապներին, և ուրեմն հրամանատար-խմբագիրս ժողովածուից հանեց համարյա բոլոր սիրային բանաստեղծություններս, որոնց մեջ կարոտ ու տրտմություն կար: Մնացին միայն մի քանի կենսահաստատ բանաստեղծություններ: Ես անխոս տեղի տվեցի: Դե ո՞վ կարող էր հակաճառել Քոչարին, որ ես հակաճառեի: 1949 թ. լույս տեսավ նրա խմբագրած «Այս իմ երկիրն է» ժողովածուն, որն իմ ամենագաղափարական, ամենապլակատային գիրքն է, ավելի ճիշտ՝ գրքուկը: Այսպիսով՝ Քոչա-

րի բնավորության ամրությունն ու համոզվածությունն իմ գլխին էլ կտորվեց...

Եկավ ժամանակ, որ այս բնավորությունը, որը լայնորեն գործել էր 1930-ական թվականներին, գտավ ավելի մասշտաբային և ավելի օգտաշահ կիրառում, հասավ մինչև համերապետության «բարձրագույն դուռը»։ մինչև կուսակցության Կենտկոմի քարտուղար Գրիգոր Չարությունյան։

Այսօր, տարիների հեռավորությունից մենք բոլորովին ուրիշ աչքերով ենք նայում այդ ժամանակի անցողորձին։ Այսօր, զգաստ վերլուծելով պատմական իրադարձությունները, Գրիգոր Չարությունյան ասելով առաջին հերթին մենք տեսնում ենք «Սասունցի Դավիթ» վիպերգության հազարամյակի շքեղ ու մեծաթափ տոնակատարությունը, հայկական մեծ էպոսի հայերեն և ռուսերեն փառավոր հրատարակությունները, Մոսկվայում կայացած հայ արվեստի և գրականության լայնաշունչ տասնօրյակը։ Հիշում ենք Մատենադարանի, Կենտկոմի շենքերի տիրական խոյացումը երևանյան բարձուքների վրա, Գիտությունների ակադեմիայի և Բյուրականի աստղադիտարանի հիմնադրումը, հայ նշանավոր մարդկանց Ավետիք Իսահակյանի, Հայկանուշ Դանիելյանի, Արամ Խաչատրյանի, Հովհաննես Բաղդամյանի համար կառուցած քարաշեն առանձնատները։ Հիշում ենք, թե ինչպես դժվարին ժամանակներում, Ստալինի, Բերիայի խեղդող շնչի տակ Չարությունյանը հնար էր գտնում ծաղկեցնելու երկիրը, ազգային մշակույթը, գիտությունը, ու մեր մեջ գնալով խտանում է մեր գոջուժի և անարդար լինելու զգացումը հանդեպ այդ խոշոր պետական գործիչը։

Բայց ուրիշ էին ժամանակները։ Չարությունյանը Հայաստան եկավ այն տարիներին, երբ Երևանի բանտերն ու Սիբիրի աքսորավայրերը լցված էին հայ ընտրանի մարդկանցով, կոտանքից ու ժառանգ կալանավորների աղաղակներով, երբ երկրի վրա գորշ ծխի պես կանգնած էր այս ամենից նյութված, շնչահեղձ մթնոլորտը։ Եկավ Թբիլիսիից որպես Գրիգորի Արտեմովիչ Արուտինով և ընկալվեց որպես հայաստաց Բերիայի կողմից ուղարկված դրածո, որը պետք է շարունակեր 1937 թվականի սև գործը։ Ժողովրդին հայտնի չէր, որ ինքն էլ 1937 թ.-ի հալածյալներից է, կնոջ եղբայրը՝ զնդակահարված, և որ ինքն էլ մշտապես նույն ճակատագրին ենթարկվելու սպառնալիքի տակ է։ Դժվար էր նորեկ ղեկավարի համար այս պայմաններում գործելը, մանավանդ համակարանք չափելը, ինչքան էլ հոգու խորքում հայրենասեր լիներ, ցանկանար մերժենալ իր ժողովրդին։

Այն էլ ասենք, որ Չարությունյանը, այնուամենայնիվ, ավտորիտար կարգերի ծնունդ էր, այդ ոգով սնված ու դաստիարակված։ Վարժված էր մենատիրությանը, իր կամքին չիակառավելուն, շրջապատը իրեն ենթարկելուն։ Իսկ շրջապատն էլ 1937 թիվ տեսած, վախվորած, հաճույակատար մարդիկ, մեծ մասամբ՝ ռուսախոս, որոնք անկարող էին լավատեղյակ խորհրդատու լինել հայերեն չիմացող «խոզ-յախինին»։ Եվ եթե վերջինս այս կամ այն կերպ մերժեցնում էր ճարտարապետներին, նկարիչներին, մանավանդ, կոմպոզիտորներին, որոնց արվեստը զնահատելու համար հայերենի իմացություն չէր պահանջվում, ապա հայ գրողներին հասկանալն ու զնահատելը դժվար էր, համարյա անհնար։ Երևի Չարությունյանի՝ հայե-

րեմին չտիրապետելն էր պատճառը (որ չնայած իր ջանքերին, մինչև վերջ էլ չկարողացավ հաղթահարել), մայրենիի նկատմամբ թաքուն մեղավորության, խորթ զավակ լինելու զգացումը, որ մի տեսակ դիսկոմֆորտ էր ստեղծում հայ գրողների հետ հարաբերելիս և առիթ տալիս փոխադարձ օտարացման:

Այդ օտարացման համար ուրիշ առիթներ էլ կային: Հայտնի չէ խրախուսող՞ն էր արդյոք երկրի առաջին դեմքը, թե ոչ, փաստն այն էր, որ հանրապետությունում օրեցօր ավելի էր շեշտվում ռուսաց լեզվի, ռուսական դպրոցների գերակայությունը, ծավալվում էին չարաբաստիկ «միասնական հոսանքի», կոսմոպոլիտիզմի դեմ պայքարելու Մոսկվայից եկող հրահանգների տեղական ծախավեր կիրառումները, աչալուրջ գործում էր անցած տարիներին լարված ԿԳԲ-ական մեքենան, որ շարունակում էր իր աղորիքի մեջ առնել այս ամենի դեմ կամա թե ակամա ծայն բարձրացնողներին: Հիշում եմ, թե ինչպես դատվել ու բանտարկվել էր գրականագետ Հրայր Մուրադյանը միայն նրա համար, որ ընկերական հավաքությանից մեկում դժգոհել էր ռուսական դպրոցների բազմաճյուղի դեմ: Այս անուրախ պատկերի ամենաուժգին ակորդը եղավ 1949 թվականի հունիսի 12-ը, երբ մի գիշերվա մեջ հավաքեցին և բեռնատար վագոններով Ալբայի երկրամաս ուղարկեցին ի թիվս այլազգիների, նաև հազարավոր անմեղ հայերի՝ ծերունիներ, կանայք, երեխաներ, մեծ մասամբ հայրենադարձ ընտանիքներ՝ մի անգամ ևս մոռալելով պատերազմի հաղթական հրավառությունից պայծառացած երկինքը...

Բնական է, որ այս ամենը պետք է խտացներ դժգոհության մթնոլորտը ղեկավարության և առաջին ղեկավարի շուրջը, և, ինչպես միշտ, այնպես էլ այդ տարիներին երկրում տիրող տրամադրությունների հիմնական արտահայտիչներն էին գրողները՝ երկու գաղափարակից ընկերների՝ Նաիրի Զարյանի և Հրաչյա Քոչարի գլխավորությամբ:

Վրա հասավ 1953 թվականի մարտի 5-ը՝ Ստալինի մահվան օրը: Այդ օրերին ես Մոսկվայում էի: Թե ինչ աշխարհացունց արձագանք ունեցավ այդ մահը, դուրս էիմ հուշագրության սահմաններից: Միայն կասեմ, որ այնքան բուռն էր հուզմունքս ու հանգուցալին տեսնելու մղումս, որ եթե «Մոսկվա» հյուրանոցում ապրելով Հայաստանի պատվիրակության հետ հատուկ մուտքով չմտնեի Սյունազարդ դահլիճ, կմիանայի Սյունազարդ դահլիճի շուրջը՝ այլիք տվող բազմահազար բազմությանը և կկոխկռտվեի ոտքերի տակ: Հուղարկավորության օրերին Մոսկվայի Գրողների միության մեծ դահլիճում, սգո միտինգներում էլ այնպիսի սրտառուչ, արցունքաշաղախ ելույթ ունեցա, որ միտինգից հետո ներկաները մոտենում, շնորհակալություն էին հայտնում իրենց սրտերն էլ թեթևացնող իմ խոսքերի համար: Իսկ երբ հուղարկավորությունից հետո մեկնեցի Մոսկվայի մոտակայքում՝ գտնվող Գալիցինոյի ստեղծագործական տուն՝ թղթին հանձնելու զգացումներիս այդ հորձանքը, և օրեր շարունակ նույն տնային խալաթով գրում էի սգո պոեմս ու այդպես էլ իջնում էի ճաշելու, երբ միայն վերադարձիս օրը մարդավարի հազմված մտա ճաշատուն, ծանոթ գրողները բարյացակամ հեզմանքով վրա բերին. «Ա՛, ա՛, Սիլվա Բարունա-

կովմա, բանից պարզվում է Ղուք ուրիշ զգեստ էլ ունեք...»:

Այժմ ծիծաղելի թվացող այս վիճակներիս համար, մանավանդ գրածս աղեկը-տուր պոեմիս համար զարմանում ու ամաչում եմ, բայց դե, ի՞նչ արած, իմ կենսագրության մոլորություններն են, ու ես չեմ ուզում դրանք դուրս թողնել:

Մոսկվայից վերադարձա մարտի վերջերին ու հազիվ եկած՝ գլխիս չսպասված ամպրոպի պես պայթեց Բերիայի գահընկեցության լուրը: Մի քանի օր հետո կայացավ Գրողների միության կուսակցական փակ ժողովը: Բոլորը անակնկալ լուրից շշմած-շփոթված էին: Ամբիոնին էին մոտենում անասելի լարված, այդ թվում նաև ես: Ելույթս նախօրոք գրել էի, գիտեի՝ ինչպես պիտի խոսեմ և ում մասին պիտի խոսեմ: Դրա համար էլ անսովորությունից սիրտս դողում էր. ասում եմ անսովորությունից, որովհետև կյանքումս առաջին անգամ երկրի ղեկավարի մասին պիտի խոսեի այդ ոճով, դատապարտության հասնող խստությամբ, և այն էլ մի ղեկավարի, որն իմ հանդեպ շատ բարյացակամ էր եղել, և որից 15 տարի շարունակ երկյուղել էր ամբողջ հանրապետությունը...

Այդ օրվա իմ ելույթը, որը զետեղել եմ «Էջեր փակ գրողներից» գրքում, կարելի է ասել, համարձակ հրապարակախոսության անցնելու իմ մկրտությունս էր, կնքահայրերս էին Նաիրի Ջարյանը և Դրաչյա Քոչարը, որոնք փորձված հռետորներ էին, ղեկավարության հանդեպ համարյա մշտապես ընդդիմախոսներ: Նաիրիի խոսքն ավելի հախուռն էր, անհավասարակշիռ, բռն: Քոչարը խոսում էր հանդարտ, կազմակերպված, ամեն բառը հմուտ պատշաճի պես իր տեղը դնելով, երկաթե տրամաբանությամբ ամրացնելով: Այդ օրը ևս Գրողների տան ամբիոնից տրվող համազարկին տոն էին տալիս այդ երկուսը, և հենց այդ պատճառով, երբ միառժամանակ հետո հրապարակվեց Դայկոմկուսի բյուրոյի այդ օրվա ժողովը դատապարտող որոշումը, մեղադրյալի սյունին էին գամված Ջարյանն ու Քոչարը՝ հազար ու մի, իսկ առաջին հերթին՝ նացիոնալիզմին տուրք տալու մեղադրանքով:

Հաջորդ իմ ելույթը Երևանի 26 կոմիսարների շրջանի պլենումում էր նույն թվականի նոյեմբերին: Այստեղ արդեն սանիկն այնքան էր առաջ գնացել, որ պաշտպանության տակ էր առել իր երկու բազմահմուտ կնքահայրերին: Անդրադառնալով այդ որոշմանը՝ ասում եմ. «Ես ուզում եմ դեռևս մի ռուպե կարծել, որ ընկեր Դարյոյանը և այդ որոշման տակ ստորագրողները, Ն. Ջարյանին, Քոչարին և մյուսներին նացիոնալիստ հայտարարելով, իսկապես հետապնդում են սկզբունքային նպատակներ: Բայց չե՞ր ընկեր Ն. Ջարյանը և ընկեր Քոչարը իրենց ողջ կյանքում օգնել են մեր պարտիային դաստիարակելու մեր ժողովրդին ինտերնացիոնալիզմի ոգով, եղբայրության ոգով, ռուս մեծ ժողովրդին նվիրված լինելու ոգով: Շարքից հեռացնել Ն. Ջարյանին և Դր. Քոչարին, նշանակում է շարքից հանել նրանց ստեղծագործությունը, հետևաբար շարքից հանել այն զենքերից մեկը, որը միշտ ուղղված է եղել նացիոնալիզմի դեմ, որը ծառայում է ժողովուրդների բարեկամության գաղափարին: Որտե՞ղ է տրամաբանությունը, ընկեր բյուրոյի՝ անդամներ:

Ինչպես տեսնում եք, իմ այս պաշտպանական ճառը զերծ չէ դեմագոգիայի տարրերից: Ուրիշ կերպ չէր լինի: Այն տարիներին, երբ դեռ մոր-մոր էին քանդ-

վում լեզվի վրա դրած կապանքները, իսկ ԿԳԲ-ական կապանքները դեռ մնում էին կուռ ու անսասան, մասնավաճ որ, ինչպես պարզվեց վերջերս, այս օրերին մեր երեքիս անունները մտցված են եղել մոտակա ժամանակում ձերբակալվելիք անձանց ցուցակում... Գրիգոր Զարությունյանի աղջիկը Նամի Սիկոյանը, որի հետ ես հիմա բավական մտերմացել եմ, հաստատում է այդ ցուցակի գոյությունը՝ ավելացնելով, որ Գրիգոր Արտեմովիչը իմ անունը հանել է ցուցակից...

Ինչքան էլ ես, իմ սերնդակիցներ Գևորգ Էմինը, Զրաշյա Զովհաննիսյանը, Սերո Խանգադյանը, Սաղաթել Զարությունյանը, հետագայում Վահագն Ղալթյանը, Պարույր Սևակը, տարեցտարի հասունանալով որպես հրապարակախոս, ավելի աշխույժ մասնակցեցինք երկրի քաղաքական-հասարակական կյանքին, այնուամենայնիվ Քոչարը մնում էր մեր ծանր հրետանին, ամենից ազդեցիկ ու ծանրակշիռ գործիչը։ Եվ եթե Գրիգոր Զարությունյանին Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականությունից ազատելու գործում դեր խաղացինք բոլորս, հանրապետության ողջ հասարակայնությունը և առաջին հերթին ժամանակը, իրերի պատմական ընթացքը, ապա հաջորդ առաջին քարտուղարի՝ Սուրեն Թովմասյանի նշանակման հարցում, անշուշտ, վճռական նշանակություն ունեցավ Զրաշյա Քոչարի զորավոր աջակցությունը։

Սուրեն Թովմասյանը 1938-1940 թվականներին եղել էր ԶՍՍՀ Ներքին գործերի ժողովմի առաջին տեղակալ, ապա՝ պատերազմի տարիներին Թամանյան դիվիզիայի քաղբաժնի պետ, այնուհետև՝ կուսակցության բարձրագույն ոլորտների աշխատող։ 2գիտոն՝ զինվորական անցյալն էր նրանց մտերմացրել, թե բնավորումն էր ընդհանրությունը, Թովմասյանը Քոչարի մոտ ընկերներից էր։ Սակայն նրա ԿԳԲ-ական անցյալը շատերի մեջ վերապահություն էր առաջացնում։ Ես նույնպես տարակուսանքների մեջ էի։ Քոչարը եռանդով ցրեց իմ տարակուսանքները.

- Լավ, սկզբունքային տղա է, իսկական մարտիկ։
- Իսկ ընդհանուր մակարդակը... Ռուսերեն լավ գիտի։
- Գիտի, գիտի... Անցյալը օրը զրուցելիս «խիստ» ռուսերեն բառը այնպես դիպուկ գործածեց նախադասության մեջ, որ ես զարմացա, - և կրկնեց այդ բառն ու նախադասությունը։

Զիմն ես չեմ հիշում այդ բառն ու նախադասությունը, բայց հիշում եմ Թովմասյանի, որ Ավետիք Իսահակյանի թաղման հանձնաժողովի նախագահն էր, պանթոնում կարդացած դամբանականը, որտեղ մեծ տեղ էր հատկացված 1905 թվի հեղափոխության ազդեցությանը հանգուցյալի աշխարհայացքի վրա, նրա սոցիալական և ազգային մոլորություններին...

Ենթադրում եմ, որ արդեն իսկ Կենտկոմի քարտուղարի և իր ընկերոջ միջև «կատու էր անցել», այլապես ընկերը աչքի կանցկացներ այդ դամբանական-քննադատականը։

Ենթադրում եմ, որովհետև Քոչարի՝ համարյա բոլոր ղեկավարների հետ «ջանով-դուրբանով» սկսված հարաբերությունները վերջանում էին վեճով ու փոխադարձ սառ-

նությանը, քանզի Քոչարի ուժեղ բնավորությունը, արտակարգ խելքն ու մանավանդ ազգային մտածողությունը, որ գնալով զորանում էր նրա մեջ, վերջիվերջո հակասություն էր առաջացնում իր և արդեն իշխելու համն առած, թելադրողի, «կուսակցության գիծն» անցկացնողի դերում համոզես եկող ղեկավարների միջև: Այն էլ ասեմ, որ այնքան մեծ էր Քոչարի հմայքը, տրամաբանության, համոզելու, դիմացինի վրա ազդելու մոգական ուժը, որ ղեկավարներից շատերը ակամա ենթարկվում էին այդ ուժին, մանավանդ որ Քոչարի պնդումներն արդար էին, ճիշտ և ազգօգուտ: Իզուր չէ, որ այդ տարիներից սկսած տարածում էր գտել և մինչև վերջ էլ շարունակվեց մի ասացվածք, թե «Հայաստանի ղեկավարությունը «քոչարի» է պարուն», այսինքն Քոչարի թելադրանքով է շարժվում... Երանի չէ՛ր հիմա էլ մի Քոչար լիներ, ու մեր ղեկավարներն էլ «քոչարի» պարեհն ու ոչ թե ոռք ու տվիստ... «Քոչարին» ուս ուսի, թև թևի տված և այդպես ամրակուտ շղթա կազմած, թշնամու դեմ միական ու միասնական կանգնած ժողովրդի խորհրդանշն է, որը այնքան պետք է մեզ և՛ հիմա, և՛ այն տարիներին...

Մի առանձին թեմա կարող է դառնալ Քոչարն ու շրջապատը, ծանոթ-բարեկամների բազմությունն ու բազմազանությունը: Մյուս բոլոր շնորհների հետ միասին նա արտակարգ ընդունակություն ուներ իր հմայքի, իմացության, անզուգական հումորի, համոզելու անառարկելի ուժով քաշելու, իր կողմը բերելու ամենատարբեր բնավորության, զբաղումի, հայացքների տեր մարդկանց, ինչպես և անխաթար պահելու իր հին մտերմությունները, երիտասարդության, պատերազմի շրջանի ընկերներին, ազգականներին, և ջանքեր չէր խնայում նրանց օգնելու, իր հեղինակությունը գործի դնելու նրանց՝ կյանքի անպակաս թնջուկներից դուրս բերելու համար: Եվ ընդհակառակը, կարողություն ուներ նրանցից ուժ ունեցողներին ներքաշելու ազգային այս կամ այն պորբեմը լուծելու ընդհանուր ճիգերի մեջ:

Որտեղից որտեղ սերտ բարեկամություն էր հաստատել Անաստաս Միկոյանի տղայի՝ Սերգո Միկոյանի հետ, նրան «հայացրել», դարձրել ազգանպաստ գործերին խառնվող ու միջամտող ակտիվ հայորդի: Մի օր Երևանում Գրողների տնից դուրս գալիս մայքի վրա հանդիպեցինք երիտասարդ, հաղթանդամ ու միշտ հաղթական տեսքով Ջոն Կիրակոսյանին: Նրանք գրկախառնվելու չափ ջերմորեն իրար ձեռք սեղմեցին ու անցան մտերիմ զրույցի: Խոսակցից բաժանվելուց հետո, երբ նորից մոտեցավ ինձ, հարցրեցի.

- Դու ի՞նչ գործ ունես այդ կենտրոնականի հետ:
- Լավ տղա է, Սահակ Կիրակոսյանի որդին է:
- Առավել ևս... Այդ ծախիկի հին բուլշևիկի տղան ի՞նչ պիտի լինի:
- Բոլորովին տարբեր է հորից, իսկական հայ է:

Եվ իսկապես, հետագայում Ջոն Կիրակոսյանը դարձավ կրքոտ ազգային գործիչ: Կարծում եմ, որ նրա սովարածավալ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատության աշխարհ գալու մեջ քիչ դեր չի խաղացել Քոչարի հետ ունեցած մտերմությունը: Ջարմանքի նույն զգացումը ունեցա, երբ Քոչարի բուռն սատարումով նորաստեղծ Սփյուռքահայության հետ մշակութա-

յին կապերի կոմիտեի նախագահ դարձավ Վարդգես Զամազասայանը: Ես Զամազասայանին գիտեի դեռ Գրիգոր Զարությունյանի ժամանակներից, երբ հանկարծ դարձավ Գրողների միության առաջին քարտուղար և այն բարդ տարիներին դրսևորեց իրեն որպես «կարգին» մարդ, բարյացակամ, անկողմնակալ: Բայց Սփյուռքի կոմիտեի նախագահի դերում նրան չէի պատկերացնում:

- Ախր Մանկավարժական ինստիտուտի ռեկտորն ո՞ւր, Սփյուռքը ո՞ւր, - տաքակուսեցի Քոչարին հանդիպելիս:

- Գլխավորը՝ հայրենասեր է. իսկ եթե մեկը սիրում է իր հայրենիքը, իր ժողովրդին, ուրեմն Սփյուռքն էլ կհասկանա և կսիրի, - եղավ պատասխանը:

Եիշտ էր Քոչարը: Զամազասայանն իր շիտակությամբ, սկզբունքայնությամբ, իր ժամանակի համար անսովոր համարձակությամբ շուտով դարձավ Զայաստանի և Սփյուռքի սիրված ու հարգված անձնավորություններից մեկը:

Ֆիրավի, ազնվագույն մարդ էր Զամազասայանը, որի հետ ես նույնպես մոտ էի: Յիշում եմ՝ 1953-ին՝ Գրիգոր Զարությունյանին Կենտկոմի քարտուղարի պարտականություններից ազատել-չազատելու օրերին, Զամազասայանը չափազանց նեղված էր: Իր մտերիմներն էին և՛ կուսակցության նոմենկլատուրային պատկանող Զայաստանի կոմերիտմիության և Երևանի քաղկոմի առաջին քարտուղարի պաշտոնները վարած Գեղամ Ալեքյանը, և՛ նոմենկլատուրայի դեմ ծավալած պայքարի առաջամարտիկ Զրաչյա Քոչարը:

- Չգիտեմ՝ որ մեկի համար անհանգստանամ, - տարուբերվում էր Զամազասայանը, - ով էլ պարտվի՝ Քոչարը թե Գեղամը, ցավ է ինձ համար, երկուսն էլ իմ ընկերներն են...

Չաղթեց Քոչարը, բայց Զամազասայանը մինչև վերջ էլ մնաց Ալեքյանի հավատարիմը, չպակասեց նրանց տուն գնալ-գալու հաճախականությունը, ընտանիքներով բարեկամություն անելը: Իսկ երբ 1965 թվին Զրաչյան վախճանվեց, Զամազասայանը հայրություն արեց Քոչարի ընտանիքին, հոգաց նրա կարիքները, սատարեց նյութապես, որովհետև այն տարիներին իսկական գործիչները իրենցից հետո ոչինչ չէին թողնում, բացի հարգանքից ու պատվարժան անունից...

Շատ էին Քոչարի նաև հայրենական պատերազմից բերած մտերմությունները: Դրանցից էր հերոսական կենսագրության տեր, ֆրանսիական Պատվո լեգեոնի շքանշանին արժանացած Բարթոլ Պետրոսյանը, որը խիզախորեն կռվել էր Ուկրաինական ճակատում և գերի ընկնելուց հետո փախել էր ֆաշիստական համակենտրոնացման ճամբարից և Ֆրանսիայում հայ մարտիկներից կազմված պարտիզանական ջոկատի հետ մասնակցել էր Ֆրանսիայի ազատագրման պայքարին: Երևան վերադառնալուց հետո Ստալինի անհեթեթ հրամանով շատերի հետ բանտարկվում և աքսորվում է նաև Բարթոլ Պետրոսյանը՝ թշնամուն գերի համձնվելու մեղադրանքով: Դժվար չէ պատկերացնել, թե Քոչարը ինչե՞ր պետք է արած լիներ, ինչ դիմումներ ու բացատրություններ հղեր պատկան մարմիններին՝ մարտական ընկերոջը պատժարաններից փրկելու և փրկելուց հետո էլ պատշաճ գործի տեղավորելու համար:

Տեսնելու էր, թե ընկերոջը պատժից փրկելու արդյունքում ինչպես էր «պատրժվում» ինքը Քոչարը: Վերադարձից հետո Բարթոլ Պետրոսյանը աշխատում էր երևանի քաղսովետում որպես բնակբաժնի պետ: Եվ ահա ծանոթ-անծանոթ, իմանալով, որ Քոչարը մտերիմ է բնակբաժնի պետի հետ, գալիս էին Քոչարի մոտ՝ բնակարանային խնդիրներ լուծելու համար: Պետք է խոստովանեմ, որ ես էլ իմ չափով եմ «պատժել» նրան: Ընկերուհիս բնակարան էր ստացել երևանի հեռու քաղաքում: Պատճառաբանելով, որ մայրն անկողնային հիվանդ է, մշտապես խնամքի կարոտ, իսկ իր աշխատավայրը շատ հեռու է ստանալիք բնակարանից, ընկերուհիս խնդրում էր, որ իրեն տուն տան աշխատավայրին մոտ մի վայրում: Ընկերուհիուս խնդրանքը բավարարվեց, քանի որ միջամտողը Քոչարն էր...

Բոլորովին ուրիշ էր Քոչարի մտերմությունը բանաստեղծ Յրաչյա Յովհաննիսյանի հետ: Ուկրաինական ճակատում ծառայելիս Քոչարը՝ արդեն այժմ ընկած, կոչումների տեր զինվորական թղթակիցը, իմանում է, որ մոտ զորամասերից մեկում մի հայ տղա կա: Որոնում և գտնում է: Պարզվում է, որ դա Յրաչյա Յովհաննիսյանն է: Գերմանական զերությունից նոր-նոր ազատված, տուգանային ջոկատի զինվոր, հյուծված ու հիվանդ Յրաչիկը հուսահատ վիճակում է լինում: Յանդիպումից հետո Քոչարին հաջողվում է բանաստեղծ զինվորին ազատել բանակից և ուղարկել տուն: Այսքանից հետո հասկանալի էր նրանց հարաբերությունների բնույթը: Յրաչիկը, ի բնե զեղուն, գովքի մեջ՝ շոյալ, առավել զեղուն և արցունքոտվելու աստիճան հուզվում-մանկանում էր Քոչարի մոտ: Վերջինս՝ առհասարակ զուսպ, հավասարակշռված, եղբայրորեն քնքուշ էր Յրաչիկի և նրա ընտանիքի նկատմամբ, մշտապես հովանավորի դերում: Աստղիկը, որ Յրաչիկի կինն էր, թուխ, վառվռուն աչքերով ու վառվռուն խառնվածքով, երիտասարդ ժամանակ՝ դերասանական հակումներ ունեցող, շուտ բորբոքվող և շուտ հանդարտվող կին էր: Ասենք, դժվար էր Յրաչյա Յովհաննիսյանի կողակիցը լինել և քորբոքվել: Յրաչիկը մեր միջի եպիկուրն էր՝ բարի, բարետես, ինչպես ինքն էր ասում, «ուսող-խմող», այսինքն՝ վայելչասեր բանաստեղծ էր, ըստ որում այդ վայելքների, ինչպես հիմա կասեին, «զամբյուղի» մեջ մտնում էին նաև կանայք: Աստղիկը աշխատում էր առանձնապես չմանրամասնել զամբյուղի պարունակությունը և նույնիսկ կարողանում էր իր մեջ, դարձյալ հիմիկվա լեզվով ասած, «քաղաքական կամք» գտնել՝ հուճորով վերաբերվելու ամուսնու այդ կարգի հրապուրանքներին:

Մի օր՝ մեր հավաքույթներից մեկի ժամանակ, սեղանակիցներից մեկը, երևի քե՛զը տղը, նկատի ունենալով Յրաչյայի սիրառատ բնավորությունը, հարցրեց.

- Խոսքը մեր մեջ, Սիվվա՛, այդ ինչպե՞ս է, որ Յրաչիկը քեզ հետ սիրավպա չի ունեցել:

Աստղիկը, որ ներկա էր, իսկույն վրա բերեց.

- Որովհետև Սիվվան Յրաչիկից անհրաժեշտ չափով տարիքոտ չի...

Բոլորս ծիծաղեցինք, քանի որ գիտեինք Աստղիկի այդ խայթոցի ենթատեքստը: Յրաչիկը, չգիտես ինչու, համարյա միշտ սիրահարվում էր իրենից տարիքով կանանց: Լինելով բարեհոգի բանաստեղծ՝ նա իրեն քննադատող խոսքի դեմ

անճրկում-խեղճանում էր և այս առումով բոլորովին նման չէր Գևորգ Էմինին, որ իր կողմ նետված խոսքի գնդակը հմուտ թեմիսիստի պես իսկույն բռնում ու կրկնակի ուժգնությամբ վերադարձնում էր հարվածողին: Հրաչիկը, այս անգամ էլ կնոջ խոսքի դեմ խեղճացած, դիմեց մեզ.

- Տեսնում եք, չէ՞, ինչ տեսակ խայթել գիտի... իսկ դուք միշտ իրեն եք պաշտպանում, թե մեծահոգի է, հանդուրժող է... Դուք չգիտեք, թե...

Շատ չէ, բայց մի քիչ թե ես, թե բանաստեղծ ընկերները գիտեինք, որ Աստղիկը միշտ չէ, որ խայթոցներով է յուր գնում, այլ երբեմն, ինչպես հարկն է, ծայրն քարծրացնում է: Հատկապես Պարույր Սևակը, որ սիրում էր Հրաչիկին ու կենացը խմելիս տաք-տաք բացականչում «Հրաչիկ քան, քո կրծքի տակ լերդ ու թոք չկա, անբողջովին սիրտ է, ծայրից ծայր սիրտ», առանձնապես ցավագին էր տանում ընկերոջ ընտանիքում ստեղծված բարդությունները: Մի օր իր մտահոգություններն ինձ հետ բաժանեց՝ Հրաչիկին մեղադրելով բոլորովին անսպասելի, արտակարգորեն թարմ տեսանկյունից.

- Ախր, այ՛ Հրաչիկ, այ՛ անբաշար, սիրելուն էլ ձև կա, չափը պահել կա: Թող մի քիչ ինձնից սովորի, էլի: Իմ բոլոր սիրածները ոչ միայն իրար հետ են հաշտ ու սիրով, այլ կնոջն հետ էլ... Իսկ ինքը, սազը ձեռն առած, աշխարհին իմաց է տալիս, թե սիրում եմ ու սիրում... Ախր են աղջիկն էլ մեղք է: Կին է, չէ՞, պիտի խանդի: Բա կնոջը եսքան տանջե՞լ կլինի...

Ուրիշ շատ առիթներով Պարույրը այս կարգի խոստովանություններ է արել ինձ մոտ, որոնք, երևի, արժե հանձնել թղթին: Մի ժամանակ սկսել էի հուշեր գրել նրա մասին, բայց չգիտես ինչու, ընդհատեցի: Եթե հասցնեմ, կշարունակեմ... Հիմալ ու հիմակ կասեմ, որ ինչպես Պարույրի հետ, այնպես էլ իմ սերնդակիցների հետ տարիների ընթացքում դարձել էինք մի տեսակ «ընկեր-տղաներ», և ես տեղյակ էի նրանց անձնական կյանքի, այսօրվա լեզվով ասած, «ստվերային տնտեսությանը»... Օրինակ՝ Սերո խանգադյանը, միշտ է, Պարույրի նման ստվերային գործունեություն չէր ծավալում ու ոչ էլ Հրաչյայի պես ափաշկարա օֆիս էր բացում, բայց երկի քչից-շատից իր «սեղանիկն» ուներ: Համո Սահյանը, որ տաղանդավոր բանաստեղծ լինելուց բացի շատ սրամիտ էր և սրամտության համար չէր խնայի ո՛չ իրեն, ո՛չ էլ ամենափարազատին, Սերոյի և նրա կնոջ մասին հումորեսկների մի ամբողջ սերիալ էր սարքել, որ մի ժամանակ լայն տարածում ուներ: Ուզում եմ մեջ բերել դրանցից մի երկուսը:

Սերոն իր «Մխիթար սպարապետ» վեպի թարգմանության հանգամանքով երկար ժամանակ Մոսկվայում էր գտնվում: Ժենյան ինչքան էլ ամուր, դիմջ, հողի հիմնավորությունն ունեցող կին, այնուամենայնիվ հիմնավոր կասկածներ է ունենում. դե, Մոսկվայի պես քաղաք, գեղեցիկ կանայք ամհաշիվ, օրը մի քանի անգամ «Մոսկվա» հյուրանոց է զանգահարում.

- Սերո՞, հի՞նչ ես անում:

- Իստորիչեսկի ռոման եմ կլորում:

Եվ այսպես օրը մի քանի անգամ նույն հարցը ու նույն պատասխանը: Մի ան-

գամ էլ ժենյան զանգահարում է կեսգիշերին, արթնացնում է Սերոյին ու դարձ-
յալ հարցնում.

- Սերո՞, հի՞նչ ես անում:

Սերոն, համբերությունից դուրս եկած, ջղայնացած պատասխանում է.

- Մի հուրի-փերի աղջիկ եմ բերել հյուրանոց ու... էդ եմ անում...

Տարածված էր նաև հետևյալ երկխոսությունը: Սերոն, որ այդ տարիներին ա-
ռանձնատուն էր կառուցում, գնում է շինանյութերի մինիստր Վազրիկ Սեկոյանի
մոտ ու ասում.

- Վազրիկ ջան, բա գիտում չե՞ս հինչ ա պտահել:

- Ի՞նչ, Սերո՞ ջան:

- Մեր պաղպալում թարեքին դրած էն կավե կուլիկը հիշո՞ւմ ես:

- Չէ՛, չեմ հիշում, բայց ասա՛:

- Կուլիկն ընկել-կոտրվել ա:

- Ափսոսում եմ, Սերո՞ ջան, շատ եմ ափսոսում:

- Ափսոսալը քիչ ա: Ախր դու չգիտես, Վազրիկ ջան, դա մեր ազգային արժեք-
ներից էր, Ձանգեզուրի էն քոյնա բրուտագործների ոսկի ձեռքերի աշխատանք.
դրա համար ա սիրտս մրճում...

- Ցավում եմ, շատ եմ ցավում, Սերո՞ ջան, ինչո՞վ կարող եմ օգնել:

- Մի 4-5 տոննա ցեմենտ տուր, տանեմ, կուլիկը նորոգեմ...

Չեմ կարող դիմադրել մի ուրիշ «համով» պատմության մեջտեղ բերելու գա-
թակցությանը և չպատմել այստեղ: Հրաչյա Հովհաննիսյանն իր ծննդյան 60-ամ-
յակի առիթով նոր ստացած բնակարանում բավական բազմամարդ խնջույք էր
սարքել: Ես նստած էի Սերոյի և ժենյայի դիմաց: Խնջույքը գնալով տաքանում
էր, սիրուն աղջիկները մեկը մյուսի հետևից պարամեջ էին մտնում ու նազանքով
շորորում: Սերոն աչքը չէր պոկում նրանցից: Ես խորոմանկ-նշանակալից դիմե-
ցի ժենյային՝ լավ իմանալով նրա՝ հուժուրը զգալու բնատուր հատկությունը.

- Ժենյա՞, ես ո՞նց կլինի, Սերոդ ձեռքից գնում է:

- Ի՛հ, հողեմ դրա գլուխը, մեջը բան չկա...

Մինչ Սերոն, անակնկալի եկած, չգիտեր՝ ինչ դիրք բռներ կնոջ ասածի նկատ-
մամբ, կինը շարունակեց.

- Գշերները մահաճա ա անում, թե շոգ ա, գնում, մյուս օրախը քնում:

Սերոն, ինձ հառելով շփոթված-վիրավորված հայացքը, խռով-խռով վրա բերեց.

- Յա՛, ես կնանիք ուտող-ուրացող եմ...

Իմ կրտսեր սերնդակիցներից էր Վահագն Դավթյանը: Թեև Վահագնը հա-
տուկ հակում ուներ իր հովանու տակ առնել բանաստեղծուհիներին, մանա-
վանդ երբ նրանք երիտասարդ էին և նոր էին մտնում ասպարեզ, բայց մեզ էլ՝ ա-
մենակ ոչ 18 տարեկաններիս՝ ինձ, Մարո Մարգարյանին և արծակագրուհի Ա-
նահիտ Սահիյանին, դուրս չէր թողնում իր ուշադրությունից և խստաճաշակ
գնահատությունից՝ իհարկե արժանանալով լիասիրտ փոխադարձության: Սիա
մի օրինակ մեր սրտաբաց բարեկամության:

Վահագնի՝ Սփյուռքի կոմիտեում աշխատելու տարիներն էին: Մտա նրա աշխատասենյակ, տեսա՝ սուզված է գրասեղանին դիզված լրագրերի մեջ: Ներս մտնելուս պես ինձ պարզեց ամերիկահայ թերթերից մեկը.

- Նայի՛ր, հենց նոր ստացա:

Թերթում այդ օրերին Լոս-Անջելոսում գտնվող Մարո Մարգարյանի խոշոր լուսանկարն էր. ժպտում էր քաղցր, երջանիկ, հագին ոսկեթել դիպակից կարած շքեղ մի զգեստ:

- Շնտապ ուղարկել է, որ քեզ ցույց տամ, - չարածնի ժպտաց խոսակիցս՝ ակնարկելով գրչակցուհուն՝ ինձ հետ մրցելու տարեցտարի ավելացող ջանքերը:

- Ի՞նչ է ուզում ինձնից եղ քո Մարոն: Ախր, հակառակի պես, ես նրան սիրում էլ եմ. շատ նուրբ բանաստեղծուհի է...

- Դե, Սիլվա՛, կին գողո՞ղ է, ուզում է քեզ հասնի, էլի՛...

- Նայի՛ր թող ձեզ՝ տղամարդկանցդ հասնի, նոր հետո՞ ինձ, - զվարթ հոխորտացի ես, ու երկուսս էլ համերաշխ ծիծաղեցինք:

Վահագնի հետ մեր ընկերությունը ձգվեց, ինչպես ասում են, «մինչև խոր ծերություն» ու խորացավ հատկապես անկախության տարիներին: Երկուսս էլ նույն տազանապներն ու տարակուսանքներն ունեինք, բնաշխարհից արտաքուսված պապերի արյան նույն կարոտներն ու մորմոքները: Իսկ ինչ վերաբերում է «ստվերային տնտեսությանը», ապա Վահագնի մոտ դա բոլորովին էլ «ստվերային» չէր, որովհետև նրա սերերը միօրյա հրապուրանքներ չէին, այլ խոր, երկարատև, բանաստեղծին լուսավոր բախժություն և գտնումի բերկրանք պարզևող զգացում: Անշուշտ, միշտ չէր, որ նրա «գտածները» իդեալ էին ու կատարելություն, բայց Վահագնի գրչի տակ նրանք դառնում էին Աստղիկներ ու Վեներաներ, լցվում բաբախող կանացիությամբ ու մարմնեղեն թուլանքով, ու ես, կարդալով դրանք, սիրում էի կրկնել. «Վահագն, դու մեր միջի հեթանոսն ես»: Արդեն հասուն տարիքում էր, երբ բանաստեղծին հանդիպեց այն միակը, որ նախախնամությամբ պետք է հանդիպեր նրան և լիներ այն Բեատրիչեն, որ ներշնչել է մեծ Ֆլորենտացուն աննման բանաստեղծություններ: Ճիշտ այդպիսի ներշնչումների պահին են գրված Վահագնի այդ շրջանի սիրային բանաստեղծությունները, և ինչու միայն սիրային, նրա՝ նույն տարիներին գրված «Ռեքվիեմ», «Ջրույց Նարեկացու հետ», «Տենդ» սքանչելի գործերը հոգեկան մեծ լիացումների արդյունք են, հոգու բարձրաթռիչ պահերից թև առած սլացումներ:

Ահա մոտավորապես պատկերը այն երիտասարդ ժամանակակիցների, որոնք մեկը՝ ավել, մյուսը՝ պակաս չափով, առնչվում էին Քոչարին: Ես նույնպես այդ երիտասարդներից էի: Մենք միասին էինք մտել գրականություն, բարեբախտաբար ավելի ուշ, քան Նաիրի Ջարյանը և Չրաչյա Քոչարը: Մեր ժամանակներն ավելի բարի էին ու մարդկային: Մեր մեջ և մեր շուրջը Մեծ հաղթանակի բերկրանքն էր, լավատեսություն, անցյալի ճոպալը թոթափելու թեթևություն, ու մենք մի քիչ ավելի թեթև էինք ապրում, զվարթ, իմպուլսիվ: Որքան էլ տարեցտարի հասունացանք, ավելի խորքից հաղորդվեցինք մեր ժողովրդի ճակատագրին, ավելի սերտացան

մեր, մանավանդ իմ հարաբերությունները, զաղափարների ու գործելակերպի ընդհանրությունը Յրաջա Քոչարի հետ, այնուամենայնիվ, ինչպես իմ, այնպես էլ իմ սերնդակիցների և Քոչարի միջև պահպանվում էր ինչ-որ տարածություն, ամենրեքե-նալիության երանգ. նա շատ էր տարբեր՝ ուժեղ, մոնումենտալ, պատկառազոր:

Բոլորովին տարբեր էր նաև Քոչարի ընտանիքում տիրող մթնոլորտը: Ամենքին չէ, որ կին, երեխաներ ունենալով հանդերձ, հաջողվում է ընտանիք ստեղծել: Դա էլ շնորհից, կարենալու նշան է: Քոչարի ընտանիքն ընտանիք էր, որտեղ ամեն մեկն ուներ իր պատշաճ տեղը: Կինը՝ Չասմիկը, երևանյան հին ունևոր տնից էր, օժտված էր, ինչպես ասում են, աչքը կուշտ, «տեսած» կնոջ խանձը-խաթունությամբ և արժանապատիվ խոնարհությամբ, մի համաձուլում, որ կոչվում է ներքին ազնվականություն: Քոչարի ամհամար այցելուներին, ազգուտակին, համագյուղացիներին, որոնք հազարումի հարցով՝ դատ-դատարան, հողատարածությունների անարդար բաշխում, զավակների բարձրագույն ընդունվելու խնդիր, դիմում էին իրենց նշանավոր ազգականին ու համախ էլ գիշերում նրա տանը, Չասմիկը ընդունում էր անտրտուն, սիրալիր հյուրընկալում՝ լավ հասկանալով, որ Քոչարի պես ամուսին ունենալը միայն վայելք չէ, այլ նաև ամուսնու պատիվը բարձր պահելու հանձնառություն: Չայտնի էր, որ արտաքինապես զուսպ, սառը թվացող Չասմիկը պատերազմի դժվարին տարիներին, Գրողների տանը պատահաբար տեսնելով չվարած-կանգնած մի երիտասարդ կնոջ՝ երկու երեխաները կողքին, որ Բաքվից Երևան տեղափոխված բանաստեղծուհի Զիդիկ Սոֆյանն է եղել՝ ճակատային Գաբեգին Սևունցի կինը, առանց վարանելու տարել է իր տուն և երկար ժամանակ պատսպարել: Իսկ հապա Չասմիկի բացած սեղանն էր, իր ձեռքով պատրաստած ուտեստեղենի ընտիր տեսականի՝ն: Քոչարի հարկի տակ լինելիս զգում էիր, որ մտել ես տանտիրուհու տարածքը, ավելի միշտ՝ տիրույթը, որովհետև Չասմիկն էր այստեղ տներն ու տիրակալը, իսկական մի տիրուհի, ինքնավայել, ինքնավստահ, ասես Եվան էր, որ ոչ մի Լիլիթ չի ենթադրում...

Զգիտեմ՝ ինչպես եղավ օրերից մի օր սեղանակիցներից մեկը, ըստ երևույթին կատարող մի քիչ տաք, ակնարկեց ռուս բանաստեղծուհիներից մեկին, որ գրավել էր Քոչարի ուշադրությունը:

- Ո՛վ, են պետրուշկե՞ն, - բացականչեց Չասմիկն այնպիսի ինքնավստահ, քամահարալից, ոչնչացնող տոնով, որ կնշանակեր, թե իր արժանապատվությունից վեր է այդ մասին խոսելու անգամ:

Այդ բանաստեղծուհուն ես ճանաչում էի: Նա բոլորովին էլ «պետրուշկա» չէր, այլ շատ քնքուշ, հմայիչ կին՝ ժամանակին Պաստեռնակի, Մանդելշտամի, Ֆադեևի համակրանքին արժանացած: Բայց ինձ դուր եկավ Չասմիկի այդ հպարտ, նախահարձակ կեցվածքը, թեկուզև ոչ այնքան անկեղծ: Սիրող կին էր, չէր կարող զերծ լինել խանդի զգացումից, բայց իրեն պահել գիտեր:

«Մեծ տան զավակները» վեպի գլխավոր հայ հերոսներից մեկն այսպիսի միտք է հայտնում, թե՛ տղամարդը նա չէ, որի ոտքերը թուլանում են ամեն մի կանացի շրջազգեստ տեսնելիս. տղամարդկությունն այդ րոպեական բնազդները իր մեջ

սանձելն է, ամեն մի կանչող հայացքի չհանձնվելը: Իմ տպավորությամբ վեպի հեղինակը հենց այդպիսին էր: Բայց, իհարկե, դա չի նշանակում, որ նա չի ունեցել հրապուրանքներ, անգամ սերեր: Չգիտեմ վերը հիշված բանաստեղծուհու պատմությունը որքան է հավաստի, բայց գիտեմ Քոչարի հրապուրանքի առարկաներից մեկին, ուր, կարծեմ, բանը հասել էր գրավոր բացատրության, նամակների: Նա մի երևանյան հայտնի արտիստուհի էր, որով իսկապես արժեք հրապուրվել: Տաղանդավոր էր որքան իր արվեստով, նույնքան էլ իր մարդկային, ավելի ճիշտ, կանացի հմայքներով, իր ինտելեկտով, սրամտությամբ, դեզ, ինքնապաստան խառնվածքով, բոհեմին հակված ապրելակերպով: Երևանի համարյա բոլոր ակնառու այրերը արտիստ, ռեժիսոր, բանաստեղծ, խմբավար, տարվել են այդ ժամանակակից Շեմիրամի հոտությունով, սակայն հազվադեպ է եղել, որ հասել են փոխադարձության: Արտիստուհին, որի հետ երկար ժամանակ ընկերուհիներ էինք, իր ծաղրաբան-սարկաստիկ բնավորությունը տարածում էր նաև իր ասպետների վրա, բայց Քոչարի մասին խոսում էր շատ զուսպ, հարգանքով, ներքին ջերմությամբ, առանց ճշգրտելու իրենց հարաբերությունների բնույթը: Դե ես էլ խոսակցիս «քրքրելու», գաղտնիքներ կորզելու սովորություն չունեմ ու ոչ էլ ավտոժամ եմ, երբ դիմացիցն է փորձում «քրքրել» և ասել տալ բաներ, որ միայն իմն են, իմ հուշաշխարհինը... Իսկ Քոչարն էլ այն տղամարդը չէր, որ լուպազ-լուպազ խոսեր իր այրական հաղթանակների մասին և, մանավանդ, այն ամուսինն ու հայրը չէր, որ հարվածի տակ դներ իր ընտանիքի ու երեխաների արժանապատվությունը: Նա անասելի սիրում էր իր աղջիկներին, մանավանդ առաջնեկին՝ Մերիին, որի նկատմամբ սերը առավել բանձրացել էր պատերազմի դաշտում կրկնապատկվող հայրական կարոտից: Մերին, փառք Աստծո, որքան էլ զրկանքներով մեծացած, հայրական կամքն ու ամուսնունդն ուներ իր մեջ: Դպրոցն ավարտեց գերազանց ճիշդերով: Առանց դժվարության ընդունվեց Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի թուրքագիտության բաժինը (հոր խորհրդով): Նույն համալսարանում սովորեց և ավարտեց նաև կրտսեր դուստրը՝ Նվարդը, որը հիմա Զայաստանի լավագույն մարդաբաններից է:

Երբ Մերին ընտրեց թուրքագիտությունը, բոլորս զարմացած մնացինք, ու երբ ուզեցինք պարզել, հայրը խորիմաստ ժպտաց.

- Թշնամուղ լեզուն պետք է լավ իմանաս...

Զեռատես էր հոգատար հայրը: Մերին դարձավ գիտությունների դոկտոր, երևանի պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, հմուտ թուրքագետ և իր՝ գիտական խորություն ունեցող հոդվածներով ու աշխատություններով մերկացնում էր թուրք պատմագիտության զեղծարարությունները: Զոր նման խելացի էր, սրամիտ, սրան ավելացրած ծոսկովյան ուսանողական շրջապատից հետը բերած լայնախոհությունն ու ազատամտությունը:

Իսկ Քոչարը համով-հոտով հումորի վարպետ էր, սրամտության շատրվան: Զուր չէ, որ հենց նա դարձավ նորաստեղծ «Ոգնի» երգիծական ամսագրի առաջին խմբագիրը: Շատրվանում էր ամենուր՝ և՛ ելույթներում, և՛ անձնական զրույց-

ների ժամանակ, պատահաբար հանդիպելիս, տանը, փողոցում, հավաքույթներում: Չեմ հիշում մայիսյան թե հոկտեմբերյան շքերթներից մեկն էր: Արդեն մտել էինք Լենինի հրապարակ և ամբիոնին մոտենալու վրա էինք: Այնպես էր դասավորվել, որ գրողների խմբի առաջին շարքում գնում էինք բանաստեղծներս, հետևի շարքում՝ արձակագիրները: Նկատելով դա՝ ես ուրախ բացականչեցի.

- Տեսե՛ք, տեսե՛ք, արձակը հետևից է քայլում:

Արձակագիրների մեջ էր Քոչարը, որը ծանր-ծանր, խորամանկ-չարաճճի ժպտալով վրա բերեց.

- Դե արևելյան արձակ է, բնական է, որ հետևից քայլի...

Բոլորս քրքջացինք, չնայած որ պահը հանդիսավոր էր՝ մոտեցել էինք ամբիոնին: Բայց դե երբ Քոչարն էր սրամտողը, քրքիջը պահելն անհնար էր:

Ամեն տեղ փնտրված ու սիրված հյուր էր՝ Թումանյանի ընտանիքում, Իսահակյանի, Արա Սարգսյանի տանը, անփոփոխ թամադա: Թամադա չէր, այլ կոնֆերանսյե, մոնոթատրոն: Հավաքույթի ամբողջ ընթացքում ինքն էր խոսում, ու բոլորս կլանված ըմբռնվում էինք նրա խոսքն ու պատմությունները, որոնք մի-մի երգիծական նովելներ էին: Կաշխատեմ դրանցից մի քանիսը վերապատմել այստեղ, թեև առանց Քոչարի կենդանի ինտոնացիայի, գործող անձանց ձայնի, դիմախաղերի նրա վարպետ նմանակման, դրանց գրավոր արտահայտությունը շատ թերի պիտի լինի:

- Նաիրու 50-ամյակն էր: Գրողների միությունը, թերթերը, ռադիոն պատրաստվում էին լայնորեն տոնել այդ հոբելյանը: Մեկ էլ տեսանք՝ Նաիրին բողոքող ու աղմկալից ներս ընկավ նախագահության սենյակ ու սկսեց գոռգոռալ. «Սա ի՞նչ խայտառակություն է, ո՞վ է ձեզ թույլ տվել ինքնագլուխ որոշումներ հանել՝ նշելու իմ 50-ամյակը. ես արգելում եմ, ինչո՞ւ պիտի բոլորն իմանան, որ ես 50 տարեկան եմ»: Չորս կողմից սկսեցին համոզել նրան, թե քո հոբելյանը միայն ընդել չի, մեր գրականության տոնն է, մեր ժողովրդինը: Նաիրին ոչ մի կերպ չէր համոզվում, շարունակում էր գոռգոռալ: «Նաիրի՛, - ասացի, - դու ինքդ պիտի խնդրեիր, որ նշեն: Այլապես բոլորը կարծում են, որ դու 55-60 տարեկան ես»: Այս խոսքերի վրա Նաիրին հանդարտվեց, իր սովորությամբ մի լավ ճմրթեց երեսը ու կոտրված ասաց. «Լավ, թո՛ղ քո ասածը լինի»:

- Մի անգամ լիտֆոնդի թե նախագահության նիստ էր, չեմ հիշում: Խոսք բացվեց խորհրդային կարգերի բերած բարիքների մասին, թե ինչ կդառնայինք մենք, եթե չլիներին խորհուրդները: «Ես մեր գյուղում բատրակ կլինեի», - խեղճացավ Սիրասը: «Ես էլ շատ-շատ մի հարուստի տանը լվացարարուհի կդառնայի», - հառաչեց Արաքսը: «Հրաչյա՛, իսկ դու ի՞նչ կլինեիր», - հարցրին ներկաները: «Ես էլ կուլակ կլինեի ու Սիրասին ինձ մոտ բատրակ, իսկ Արաքսին էլ լվացարարուհի կպահեի»...

- 1950 թվականն էր: Ես Գրողների միության քարտուղար էի: Լուր բերին, թե Շիրազը ծանր հիվանդ է: Ամմիջնապես գնացինք: Շիրազն իսկապես հիվանդ էր, բարձր ջերմություն ուներ, քրտինքի մեջ կորած՝ ծանր տնքում էր: Իսկույն բժիշկ հրավիրեցինք, քույր և այլն, անմիջապես գործի անցան, դեղորայք, ոտքերը տաք ջուր դնել. թոքերի բորբոքում էր երևի: Մի խոսքով, անընդհատ գնում-գա-

լիս էի, մինչև Շիրազը ոտքի կանգնեց: Շիրազի գեղուններին վերջ չկար. «Քոչար, դու իմ Թաթուս հերն ես, իմ Աստղիկ մերը... Ինչխ իմ աստվածը եղնիս... Դու որ չեղներ, Շիրազը հիմա չկար»: Մի երկու շաբաթ հետո փողոցում հանդիպեցինք, տեսնում եմ՝ չի բարևում, անցնում է: Թևից բռնեցի. «Շիրազ, ի՞նչ է պատահել»: «Գնա՛, ես քեզի հետ չեմ խոսե»: «Ինչի՞ համար»: «Դու իմ ամենեն մեծ թշնամին ես, ինձի բուժեցիր, որ հալածես», ու թևը թափով ազատեց ձեռքիցս և աչքերը ոլորելով՝ պոկվեց տեղից: Մի երկու քայլ անելուց հետո գլուխը հետ թեքեց ու հոխորտաց. «Ես չէի հասկնա, ինձի Բաբկեն Կարապետյանը հասկցուց»:

- Մեր Շեղուշին գիտեք, Գրողների միության գործերի կառավարիչն էր, բայց իրեն Գրողների միության նախագահի պես էր պահում, բոլորիս հովանավորն էր, մեր կյանքը կարգավորողը: Տարիներ առաջ մեր սիրառատ բանաստեղծներից մեկը հրապուրվել էր նրանով, իր սիրագեղ խոսքերով, բանաստեղծություններով երկինք հանել: Բանաստեղծը միառժամանակ հետո երկնքից իջել էր, իսկ ինքը մնացել էր երկնքում... Էլ ոչ մեկի չէր հավանում, ոչ մեկին իրեն արժան չէր համարում: Լուսակերտում մի ընկեր ունեմ՝ Եղիզարը: Մի ժամանակ Մոսկվայում բավական մեծ պաշտոն էր ունեցել: Ինչպես էր պատահել, պաշտոնանկ էր եղել և ընտանիքը թողած՝ Մոսկվայում եկել էր, Լուսակերտում աշխատում, տուն ու պարտեզի տեր էր դարձել: Մտածեցի՝ արի էս երկուսին պսակեմ, բախտավորեցնեմ: Նախ սկսեցի Շեղուշին: Շեղուշը կարծրեց-կապտեց ու աչքերը վրաս ոլորելով՝ հարձակվեց վրաս. «Քոչար, դու ինձ վիրավորում ես: Եթե դու չլինեիր, այդ աստղին կապտակեի: Ես ո՛ր, նա... Ես քեզնից չէի սպասում»: Գիտենալով Շեղուշին բոլորս ծիծաղեցինք: Մի քանի վայրկյան հետո Քոչարն՝ անմեղ-անմեղ շարունակեց. «Նույն միտքը Եղիզարին էլ հայտնեցի: Նա էլ այնտեղ վիրավորվեց»:

Սիա այսպիսին էր Քոչարի հումորը՝ հանդարտ, անշտապ շարադրանք, իբր թե անմասնակից, անտեղյակ իր հերոսի զավեշտական վիճակներին, բայց խորքի մեջ խիստ ծիծաղելի, ասած յուրաքանչյուր բառը՝ նպատակային: Մեծ մասը վերաբերում էր իր շրջապատին, ընկերներին, մեր ընդհանուր ժանրոսներին: Պատմում էր այս երգիծական պատմությունները այնպիսի փափկությամբ, առինքնուղ ժպիտով ու հմայքով, որ համարյա ոչ ոք չէր մեղանում ու չէր էլ փորձում փոխադարձել: Մի անգամ, սակայն, փոխադարձող գտնվեց, և այդ փոխադարձողը ոչ ավել, ոչ պակաս, ես էի...

Կարծեմ 1955 թվականն էր: Նոր-մոր էր բացվել Հայաստան-Սփյուռք զբոսաշրջիկային երթևեկը, ու Երևան էր ժամանել ֆրանսահայ զբոսաշրջիկների մի խումբ: Ու քանի որ դա դեռ արտակարգ երևույթ էր, Գրողների տան կլոր դահլիճում խմբի հետ հանդիպում կայացավ: Երկարուկ սեղանի գլխին նստած էր Ավետիք Իսահակյանը: Ոգեղեն մթնոլորտ էր՝ հայության ճակատագրի, լինել-չլինելու տագնապնեքով համակված: Վարպետը, որ մշտապես համակված էր այդ տագնապնեքով, սկսեց բարձրաձայն մտորել.

- Հայ ճարտարապետությունը 1000 տարի կպահի մեր ժողովրդին, 500 տարի՝ Կոմիտասը, 100 տարի՝ «Ես իմ անուշ...»-ը, 100 տարի՝ մեր Դերենիկի «Վար-

դանանքը», մի 50 տարի էլ Սիլվայի «խոսք իմ որդուն»-ը...

Ինձ համար շատ թանկ էր Վարպետի գնահատականը, մանկորեն հուզված էի և շոյված: Մեկ էլ տեսա Քոչարն Իսահակյանի խոսքը անփույթ-անփույթ կատակի վերածեց:

- Վարպետ, իսկ Բաբկեն Կարապետյան՝ ինչքան կպահի, իսկ Ցական Ծո՛ղե՛նցը, իսկ Աշոտ...

Ես վիրավորված, բայց, այնուամենայնիվ, պահելով Քոչարի խաղացկուն ոճը, նրա խոսքը կտրեցի:

- Վարպետ, իսկ Յրաչյա Քոչարի «Մեր տան զավակները» քանի՞ տարի կկարճացնի հայ ժողովրդի կյանքը...

Քոչարը հանկարծակիի եկավ, գունատվեց ու չկարողացավ հարմար խոսք գտնել: Ասածս, այն էլ իմ կողմից, շատ էր անակնկալ ու արտակարգ: Առհասարակ ուրիշներին երգիծանքի թիրախ դարձնող մարդիկ իրենք իրենց էլ են ծաղրում, սրտաբաց ընդունում փոխադարձ ծաղրն ու կատակը: Քոչարը, սակայն, այդպիսին չէր: Դիմացինի կատակը չէր հանդուրժում, ընդունում էր ցավազին, վիրավորվում: Երևի սովոր չէր: Ինչ արած, ամեն տեղ և ամեն ժամ չէ, որ մարդ ճիշտ է լինում...

Այս հուշապատումը ես սկսեցի Գրողների տան պատին երկու լուսանկարների բացակայության անարդար լինելու զգացումից և այդ անարդարությունը շտկելու մտադրությամբ: Սակայն, ինչպես երևի նկատում է ընթերցողը, արդեն 20 էջից ավել գրել եմ, բայց դեռևս չեմ ձեռնարկել անմիջականորեն իրագործելու այդ մտադրությունս: Գիշտն ասած, այս 20-25 տարիների ընթացքում ես այնքան եմ գրել, խոսել, վիճաբանել 1937 թվականին ստեղծված իրադրության մասին՝ ջանալով Ն. Ջարյանին և իր ընկերներին դուրս հանել դաժան զրպարտությունների, այս կամ այն կողմից տեղացող անարդար քարկոծումների տարափի տակից, և շոշափելի արդյունքի չեմ հասել, և ինձ համար, մանավանդ իմ այս անառողջ վիճակում, նորից անդրադառնալ այդ ողբերգական ժամանակներին շատ ծանր է, լրացուցիչ ուժ ու նյարդեր պահանջող: Բացի այդ, ես նկատել եմ՝ որքան ավելանում են պատմության հանդեպ անաչառ վերաբերմունք ցուցաբերողները, Նաիրի Ջարյանին, Յրաչյա Քոչարին ամբաստանությունների ոստայնից դուրս հանել ցանկացողները, կարծես ի հեճուկս վերջիններիս, գնալով ավելի բուռն են դառնում 1937 թվականի ողբերգությունները շահարկողների և դրանով հաց վաստակողների թույնն ու ատելությունը և կրկնակի բորբոքվածությամբ են բզկտում իրենց ամբաստանությունների զոհերին: Ավելին՝ նրանք իրենց ատելությունը տարածում են բոլոր հակաճառողների նկատմամբ. չէ՞ որ վերջինները նրանց զրկում են հացից:

Գոնե այդ «պատմական անիրավությունները ժամանակի դատին հանձնողները» ազնիվ ու անբասիր լինեին: Օրերս իմացանք, թե ինչպես գրականագետ կոչվող Դավիթ Գասպարյանը՝ մեկը Նաիրի Ջարյանի դեմ տևաբար սուր ճոճողներից, հեռացվել է Երևանի մանկավարժական համալսարանից՝ քննությունների ժամանակ ուսանողներից կաշառք վերցնելու համար: Դա չգարձացրեց Դավիթ

Գասպարյանին լավ ճանաչողներին: Դեռ տարիներ առաջ նա նույնպիսի հանցանքի համար քրեական պատժի էր ենթարկվել: Մնում է պատկերացնել, թե այսպիսի վարքի տեր անձը, որը այս էլ քանի տարի, այն էլ մեր հանդարտ, անքոնադատ ժամանակներում, անխնա, անզգամ կնոջ անամոքությամբ տրորում, ոչնչացնում է տաղանդավոր արձակագրուհի Անահիտ Սահինյանի պատկանելի վաստակը, ինչ էլ թե Սահինյանը փոքր-ինչ ցավեցրել է Գասպարյանի ուղքի կոշտուկը, - ի՞նչ ավերածություններ կգործեր, եթե ապրեր 1937 թվականին, քանի՞ անմեղ մարդ սասարեզից կհանվեր նրա ամբաստանագրերով: Ուստի թվում է ավելորդ է և անարդյունք այսպիսիների հետ վիճել լրջորեն, երևույթների ու փաստերի համակողմանի վերլուծությամբ: Այնուամենայնիվ, մենք մեր հույսը կապում ենք բարեխիղճ պատմաբանների անաչառ, շահարկումներից զերծ ուսումնասիրությունների հետ, և եթե չլիներ այդ հույսը, ես հազիվ թե իմ ժամանակացիս և ականատեսիս պարտքը համարեի գրիչ վերցնել ճշմարիտ վկայություններ տալու, գալիք պատմաբանների գործը փոքր-ինչ թեթևացնելու համար:

Նաիրի Ջարյանի գաղափարակից ընկերներից առաջինը հիշատակվում է Զրաչյա Քոչարի անունը: Ես չեմ ծանրանա 30-ական թվականներին «Նոյեմբեր» ամսագրի շուրջը համախմբված գրողների միջև ծավալված բախումների վրա: Ես դրանց մասին գիտեմ միայն մամուլից, ինչպես մեծ մասամբ մամուլից և մարդկանց պատմածներից գիտեմ 1933-38 թվականներին գրողների շրջանում տեղի ունեցած կատաղի, իրար մերկացնող, դատապարտող ժողովների, թերթերում ու ամսագրերում տպագրված հոդվածների մասին: Տարիներ անց երևի 1953 թվականից հետո, ներկա եմ եղել Գրողների միության նախագահության այն նիստին, երբ այդ բախումների ակտիվ մասնակից, իր վրա տեղացող հարվածներին ավելի-նով փոխադարձող, «Հեղմար աղբյուր» վիպակի հեղինակ Մկրտիչ Արմենը կարողում էր իր դիմումը՝ ուղղված Կենտկոմին և Գրողների միության նախագահությանը: Արմենը երկար շարադրում էր այն տևական հալածանքները, որ կիրառել են իր դեմ Ն. Ջարյանը և Զ. Քոչարը 1930 թվականից սկսած: Շնորհդրում էր անողոք, դաժան ձևակերպումներով, ու եթե Նաիրուն՝ որպես օժտվածի, փոքր-ինչ խնայում էր, ապա Քոչարին ուղղակի ոչնչացնում էր, համարում ապաշնորհ, անքանաքար: Մինչև հիմա էլ մտքիս մեջ է Արմենի բերած մի պատկերը. «Եթե Նաիրին ինչ-որ չափով գրող է, իսկ, ինչպես ասում են, «Մկան շ-ն էլ ջաղացին օգուտ է» (հեղինակը բառն արտասանեց լրիվ), ապա Քոչարը... և այլն, և այլն»: Դե, ինչ ասես, մամակի հեղինակի գրելու տաղանդը՝ կա, կրած բանտն ու աքսորը՝ կան, տարիներով կուտակված թույլն ու վրեժը՝ կան, էլ ո՞վ կարող է նրա բերանը փակել, մամալանդ որ Նաիրու և Քոչարի՝ այդ տարիների ելույթներում չեն պակասում Մկրտիչ Արմենին նացիոնալիզմի, անցյալի իդեալականացման մեջ մեղադրող տողեր:

Չեմ հիշում մամակում հիշատակվո՞ւմ էր, թե՞ ոչ, բայց մինչև հիմա էլ Նաիրու և Քոչարի դեմ գործում է մի փաստ՝ անվիճելի, անհերքելի, քանզի գրված է սևով սպիտակի վրա, այն էլ ուղղված միութենական «Литературная Россия» թերթին: Ես այդ մասին գրել եմ «Էջեր փակ գգրոցներից» գրքում, այստեղ էլ ուզում եմ

կրկնել: Ընդունված է ասել՝ փաստերը անողոք են... Սակայն փաստերը անողոք են նաև այն պատճառով, որ երբեմն ծածկում են խորքային ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունը հետևյալն է: Պահը եղել է ուղղակի ճգնաժամային: Գրողների միության այդ օրերի ղեկավարները Զարյանին, Քոչարին, նրանց ընկերներին հեռացրել էին կուսակցությունից, սպասվում էր ծոտալուտ բանտարկություն: Միակ ելքն էր՝ հեռագրել Մոսկվա և իրենց նացիոնալիզմի մեջ մեղադրողներին մեղադրել նույն այդ նացիոնալիզմի և ժողովրդի թշնամիներին հովանավորելու մեջ... Միակ ելքը գրպարտել գրպարտիչներին: Դաժա՛ն, ահալ՛ո՛ր ժամանակներ...

Այդ դաժան, ահավոր ժամանակներից Քոչարի հետ կապված մի փաստ էլ վերաբերում է արծակագրուհի Արաքսին, թե իբր ինքը Քոչարը, միլիցիոներներին առած, մտել է նրա բանտարկված ամուսնու՝ ժամանակի հայտնի կուսակցական գործիչ Դամո Դովհաննիսյանի բնակարանը, փողոց նետել Արաքսին, երեխաներին, տան ողջ կահույքը և գրավել բնակարանը: Այս արարքը Արաքսը պատմեց 1956 թվականի ապրիլի 5-ին Գրողների տան մեծ դահլիճում՝ բազմամարդ ժողովի ամբիոնից՝ Քոչարի ներկայությամբ: Արաքսը, որ արդեն հասակն առած կին էր, այս ամենը պոթեկաց տասնամյակներ շարունակ իր ներսում պահած-կուտակած մաղծ ու զայրույթով ու կրկնապատկված ատելությամբ, աչքերում տարօրինակ փայլ կար, արցունքներ ու մի հիվանդագին հրճվանք, թե վերջապես եկել է հատուցման ժամը... Տպավորությունը ծանր էր, սարսուռի, ծանավանդ որ դահլիճում Քոչարին չսիրողներ կային: Թեթև չէր նաև սիրողներիս վիճակը: Որքան էլ ամբիոն բարձրացած Քոչարն ասաց, թե արծակագրուհին աղավաղում է եղելությունը, շփոթում-խառնում դեպքերը, միևնույն է, ժողովի խանգարված կշռույթը չկարգավորվեց, ճնշչ մթնոլորտը վերջնականապես չցրվեց...

Իմ սեղանին է Քոչարի արխիվից հանած նյութերով լեցուն թղթապանակը, որն իմ խնդրանքով ինձ է տրամադրել գրողի դուստրը՝ հորն անձնուրացորեն նվիրված Նվարդ Քոչարը: Այնտեղ կա Քոչարի նամակը՝ հասցեագրված վերոհիշյալ դեպքերին մասնակից, նույն տարիներին դատախազության աշխատող Թահապուսուն: Նամակը գրված է հուզված, վրդովված, գրպարտությունների տարափի տակ ընկած մարդու հոգեվիճակով: Քոչարը խնդրում է Թահապուսուն վկայել, որ իրականում դեպքերն այնպես չեն եղել, որ իրեն օրդեր են տվել զբաղեցնելու ձերբակալված Դամո Դովհաննիսյանի բնակարանի երկու սենյակը՝ մեկը թողնելով կնոջը, որ ինքը երկար ժամանակ տատանվում էր գնալ, «բայց ինձ բացատրեցին, - գրում է նամակագիրը, - որ եթե գրող չգնա այդ բնակարանը, այլ մի կողմնակի մարդու տան, կարող է վտանգ լինել, որ Դամո Դովհաննիսյանի ընտանիքին ամբողջովին դուրս անեն, ինչպես դուրս էին հանում գրեթե բոլորին: Ասացին, որ Դ. Դովհաննիսյանի կինն է խնդրել՝ գրողներից մեկին ուղարկեն: Մի քանի օրվա ձգձգումից հետո էր, որ ես օրդերով գնացի այդ բնակարանը»: Այնուհետև Քոչարը պատմում է, թե ինչպես դուռը բացում է իրենից առաջ բնակարանը անօրինականորեն գրաված տնային կառավարիչը՝ Դարություն Մամիկոնյանը, ուստի հարկ է լինում դատախազությունից կանչել Թահապուսուն և մի միլիցիոների, և Դարությունը, տեսնելով օրդերը, անխոս հանձ-

նում է բանալիները և դուրս գալիս: Իսկ Քոչարը առանց վեճի, առանց երրորդ սեմյակում փակված Արաքսին տեսնելու մտնում է մինչ այդ կարասիներից դատարկված սեմյակները: «Արաքսն ասում է, - շարունակում է նամակագիրը, - Քոչարը Շահապուհու հետ, մի ամբողջ խումբ մարդիկ հետներն առած, ներս խուժեցին իմ բնակարանը և գողգողացին, թե ազատեք բնակարանը, հակահեղափոխական տրոցկիստներ, սրիկաներ և այլն, և այլն... Շահապուհուն բերանից, - ասում է, - օրու հոտ էր փչում: Ինչ կա Շահապուհիների համար, - ասում է, - նրանք կարող են մի բաժակ օդիով մի տուն քանդել»: Իբր թե ես Չեզ կաշառել եմ, հարբեցրել և Չեր օգնությամբ բռնագրավել եմ նրա իրերը տնային կահկարասիներ, ռադիոընդունիչ և այլն»: Այսպես է գրում Շահապուհուն Քոչարը՝ եզրակացնելով. «Ես կարող էի զրպարտիչին դատի տալ, բայց այդ բանը չեմ անի: Նա դժբախտ կին է և իսկապես տրորվեց այդ տարիներին: Բայց իր դժբախտությունը, որ օգտագործում է քաղաքական պրովակացիաներ անելու համար, վատը դա է, դա շատ վատ է: Ես կբավարարվեմ միայն խնդրելով, որ Չեր և ընկեր Չարությունի վկայությունները կարդան մի մեծ ժողովում, ինչպես որ նա մեծ ու հեղինակավոր այդպիսի ժողովում զրպարտեց ինձ և Չեզ»:

Նամակին կցված է վերոհիշյալ Չարություն Մամիկոնյանի վկայությունը, որտեղ նա հաստատում է, որ իսկապես Քոչարից առաջ ինքն է անօրինականորեն զբաղեցրել բնակարանը և ինքնակամ ազատել հանձնելով օրդերը ներկայացնողին:

Խելացի, բազմափորձ, բայց, այնուամենայնիվ, միամիտ Չրաչյա Քոչար: Սխր դեռ Նաիրի Ջարյանի կենդանության օրոք կուսակցության Կենտկոմի քարտուղար, Պետական անվտանգության կոմիտեի նախկին փոխիմիստար Սուրեն Թովմասյանը Գրողների միության ամբիոնից պաշտոնապես հայտարարեց, որ ԿԳԲ-ի արխիվում Նաիրի Ջարյանի ստորագրությամբ որևէ մեկի դեմ գրած մատնիչության ոչ մի փաստաթուղթ չկա, սակայն դա չօգնեց, որ մինչև օրս էլ Նաիրի Ջարյանի անունը՝ որպես մատնիչի, հոլովվի ու դուրս մղվի ասպարեզից, էլ ո՛ր մնաց անհայտ մի Շահապուհուն կամ ընկեր Չարությունի վկայությունները օգնեն զրպարտության կաշուն պիտակը վրայիցդ պոկելու...

Ծանր է նորից անդրադառնալ 37 կողի տակ հասկացվող աղետավոր եղելություններին և մարդկային խեղված հարաբերություններին, աչքի անցկացնել «Авариямъ не было»-ին ուղղված դիմումը, վերհիշել Արաքսի ելույթը, կարդալ Քոչարի տառապալից նամակը ու նորից զգալ, թե ինչպես կամա թե ակամա մարդիկ ընկել են դաժանորեն լարած այդ մեքենայի պտուտակների մեջ և արել բաներ, որ չէին ուզեմա անել, ասել խոսքեր, որ չէին ուզեմա ասել... Քոչարի նամակում կա ուրիշ, ոչ պակաս միամիտ մի պարբերություն. «Արաքսին բոլորը ճանաչում են, և ոչ ոք չի հավատում նրա պրովակացիային: Ինձ էլ են բոլորը ճանաչում, և ոչ ոք չի հավատա, որ ես ընդունակ եմ այդպիսի բանի...»: Ավա՜ղ, հենց այդ օրը դաիլիճում հավատացողներ կամ հավատալ ուզողներ կային, կային նաև դաիլիճից դուրս... Չէ՞ որ հասարակության մեջ կա մարդկային մի տեսակ, որը հակված է միշտ վատին հավատալու, վատով ոգևորվելու, և այնքան կրքոտ ու համառ են նրանք իրենց հակումների մեջ, որ երբեմն նրանց հաջողվում է դարձ-

մեկ այն ընդհանրական տրամադրություն, տարածել օդում, ու մեկ էլ տեսար՝ այդ ժխտական մամրոները փոշու պես մտնում են մարդկանց հոգու, մտածողության վրա: Այդպես է, որ կառչելով անցած-գնացած վատին, անցողիկին, պատահականին, անտեսում են այն վիթխարի լավը, մնայունը, այն անգնահատելի դերը, որ ունեցել են Նաիրի Զարյանը և Յրայա Քոչարը մեր բարդ ու դժվարին կյանքում. այդպես է, որ հնարավոր է դառնում դուրս թողնել Յայաստան երկրի կենսագրությունից և Գրողների տան նկարաշարից այդ երկու մեծություններին...

Հիսունական թվականների վերջերը և վաթսունականների սկիզբը մույնպես լարված տարիներ էին, մանավանդ՝ Յայաստանում: Սակայն այդ տարիների լարվածությունը մման էր երկունքի լարվածությանը: Իլյա Էրենբուրգի ձևակերպմամբ «ommentary»-ը, որ կնշանակի «ծնիալ», հայ իրականության մեջ գտել էր յուրատեսակ դրսևորում. այն սոցիալականից ավելի ազգային երանգավորում ուներ: Յայաստանյան ծնիալից հետո գարնանային ծնախառն հողից բարձրացող գոլորշու մեջ ինչ-որ շունչ կար, տաք շնչառություն, աշնանացան ցորենի հետ ասես ծլարծակում, արևերես էին ելնում մինչ այդ քնած ինչ-որ գրգիռներ, զգացումներ, հայրենասիրական լիցքեր, որ լցվում էին հոգիների մեջ, ուռճացնում, զորացնում հոգին, և այդ բոլորը դարձյալ փոխանցվում էր հողին, վերակենդանացնում այնտեղ արդեն չորացող արմատները: Կենարար տուրևառություն էր դա, հողի, այդ հողի վրա արարված պատմության և հայ մարդու՝ փոխադարձ ներթափանցում, փոխադարձ ներարկում:

Այդ տուրևառության մեջ խոշոր դեր ունեցան հայ ժամանակակից պատմագրությունը, արվեստը, գրականությունը, գրողները: Եվ այս բոլորի մեջ՝ գրողի, հրապարակախոսի և գործչի իր ամբողջականությամբ ամենից շատ Յրայա Քոչարը:

Դեռ պատերազմի ժամանակ գրած «Գեներալի քույրը» պատմվածքում տղերի տակից, ինչպես դեռ չհանգած թոնրից, ծխացող թուրքի ձեռքով սպանված ալաշկերտցի հոր՝ վեցամյա հասակից որբացած, գաղթ ու կոտորած տեսած գավակի սրտում և հիշողության մեջ անթելված ցավն ու կարոտը, ծնիալի տարիներին մի նոր հորձանքով խուժեց հասուն գրողի կյանքի մեջ, համակեց ողջ էությունը և դարձավ առօրյա ապրում, դարձավ «Նահապետ», «Կարոտ», «Մայրենի լեզու», «Սպիտակ գիրք» և ամենից շատ՝ հրապարակախոսի բռնկում, պայքար, ազգանվեր գործունեություն:

Երբ 1962 թ. Թեքեյան մշակութային միության հրավերով մեկնեցի Բեյրութ, ամբողջ Բեյրութով մեկ թնդում էր ինձնից առաջ այնտեղ այցելած Յրայա Քոչարի անունը: Նա Սփյուռքի պատմության մեջ առաջին խորհրդահայ գրողն էր, որ ոտք էր դրել Դաշնակցության միջնաբերդ համարվող Փլանջյան ճեմարան և վիճաբանության մեջ էր մտել ու հաղթանակած դուրս եկել ճեմարանի տնօրեն, Յայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանի հետ: Խորհրդային Յայաստանից ժամանած գրողի հայաշունչ խոսքը, հայրենի պատմության իմացությունն ու թանձր հայրենասիրությունը զարմացրել էր բոլորին:

իզուր չէ, որ սփյուռքահայ ականավոր գրող, հրապարակախոս Անդրանիկ Ծառուկյանը Հայաստան այցելելուց հետո իրեն հատուկ երգիծախառն ոճով ասել էր, թե Հայրենիք ճամփորդելիս ինչ կուզեք տարեք, բայց հայրենասիրություն մի տարեք. այնտեղ այդ ապրանքից կա առատորեն:

Հայտնություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ Հայաստանում հայրենասիրական այս մթնոլորտի ստեղծման-խտացմանը մեծապես նպաստեց Ավետիք Իսահակյանի ներկայությունը, որը ասես Հայաստան վերադարձավ ոչ թե աշխարհագրական, այլ ժամանակի հեռուներից, Մաշտոցից ու Խորենացուց, վանքերից ու դպրանոցներից, Աղթամարից, Անիից և մեզ հաղորդեց դարերի, անցյալ մեծությունների, պանդխտացած Արևմտյան Հայաստանի շունչն ու կարոտը, մեր հոգուն ու ձեռքերին փոխանցեց Աղայանի, Թումանյանի ձեռքսեղմունի տաքությունը: Ու բոլորիս մեջ Քոչարն էր, որ Դերենիկ Դեմիրճյանից և Մարտիրոս Սարյանից հետո, ամենից հաճախ էր սեղմում Իսահակյանի ձեռքը, ամենից սերտ Քոչարին էր կապված Վարպետը, նրան էր վստահում զրուցել այն ժամանակ փակի տակ դրված նյութերի մասին՝ Դաշնակցություն, ֆիդայիներ, կամավորական շարժում, Մեծ եղեռն, Փետրվարյան ապստամբություն և ուրիշ «ընդհատական» թեմաներ: Քոչարը Վարպետի ողջ ընտանիքի սիրելի մարդն էր, հավաքությունների անփոփոխ սեղանապետը: Նույնիսկ տիկին Առֆին Վարպետի կինը, որ հոգնում էր այցելուների շատությունից և իրեն հատուկ անմիջականությամբ շատերի հանդեպ չէր թաքցնում իր անբարյացակամությունը, Քոչարին սպասում էր և ընդունում հատուկ քաղցրությամբ:

Հայտնի է հետևյալ երկխոսությունը: Առավոտ շուտ Քոչարը Իսահակյանին գանգ է տալիս.

- Վարպետ, շնորհավորում եմ...

- Ի՞նչը, - հարցնում է Վարպետը:

- Զեզ Լենինի շքանշանով եմ պարգևատրել:

- Էհ, - հուսախաբ բացականչում է խոսակիցը, - ես էլ իմացա՝ Ղարաբաղն են տվել...

Հենց այս երկխոսությունը ցույց է տալիս, որ Ղարաբաղը եղել է Քոչարի և Իսահակյանի առանձնագրույցների մշտական առարկան, իսկ այդ տարիներին այդ «առարկան» միայն երկու անձի միջև խոսելիք թեմա էր: Բավական է այդ երկու անձը դառնային երեք, որտեղից որտեղ կհայտնվեին հետապնդողները ու հալածանքները... Սակայն կային թեմաներ, որոնք արդեն դուրս էին եկել «ընդհատական» և քննարկվում էին ոչ միայն երկուսից ավել մարդկանց մասնակցությամբ, այլ խումբ-խումբ հավաքվածների, այլ ժողովներում, հավաքատեղիներում, ղեկավար մարդկանց հետ տեղի ունեցող հանդիպումներում:

Վերոհիշյալ թղթապանակում գտնվում է մի այլ կարգի 28 էջանոց փաստաթուղթ: Դա 1961 թվականի մարտի 14-ին Հայաստանի կուսկենտրոնում ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի՝ հայ գրողների հետ ունեցած հանդիպման սղագրությունն է: Հանդիպմանը մաս-

նակցում են Վ. Նորենցը, Ն. Ջարյանը, Զր. Քոչարը, Գ. Սարյանը և Զր. Զովհան-նիսյանը, պաշտոնական անձինք Կենտկոմի քարտուղար Յակով Ջարոբյանը, Ա. Քոչինյանը, Զովհ. Բաղդասարյանը, ինչպես նաև՝ Կենտկոմի գիտության բաժնի վարիչ Ռ. Խաչատրյանը և Ջարոբյանի օգնական Մ. Խարազյանը: Անաստաս Միկոյանը իր սուղ ժամանակից նախատեսած 40 րոպեի փոխարեն տրամադրում է մեկ ժամից ավելի, և գրողները իրենց անվամբ հայրենակցին անշարժ ներկայացնում են ժամանակի հիմնախնդիրները հայերենի և հայ դպրոցի վիճակը, Անդրանիկի, Սարգսրապատի ճակատամարտի, հայ ազատագրական պայքարի և այն ղեկավարող կուսակցությունների վերագնահատման անհրաժեշտությունը, սփյուռքահայ արգելված գրողների, այդ թվում՝ Լևոն Ծանթի հրատարակման հարցը, օտար «pecnyдnka», «чармуса», «pesonюcтa», «кочетомыcлa» և այլ բառերի անհարկի ներմուծումը հայոց լեզվի մեջ, այնուհետև ավարացի գիտաշխատող Ազակի լեզուների ծուլում ջատագովող հողավածների հայտնվելը մամուլում, թուրք պատմագիրների՝ հայոց պատմությունը խեղաթյուրող հրապարակումները, մոսկովյան պատմաբան Միլլերի հակահայկական հայացքները և ուրիշ հարցեր:

Հուլիս է կարողալ արդեն 40-45 տարվա վաղեմություն ունեցող այս ձեռագիր փաստաթուղթը թեկուզ նրա համար, որ զգաս, թե ինչպես գրողները իրենց երկրի տեր են զգացել ու տիրոջ նման բարձրացրել իրենց և ժողովրդին մտահոգող խնդիրները՝ բողոքելով, որ Հայաստանում վերին մարմինները արգելք են դնում գիտնականների և գրողների առաջ՝ հակափարված տալու դրսի ու ներսի խեղաթյուրողներին: Եվ, ինչ խոսք, կարողալիս, ինչպես ասում են, առանց խոշորացույցի, նկատում-տեսնում ես, որ գրույցի սանձերը գտնվում են Քոչարի ձեռքում, ճիշտ այնպես, ինչպես այդ տարիների հասարակական կյանքում էլ նա էր «կառքը վարող կառապանը», վճռորոշ հարցերի առաջ քաշողն ու հետապնդողը:

Եվ որովհետև այդպես էր, դեռ 1937 թվականի շորշուփները կրող, մարքսիզմ-լենինիզմը պաշտպանելու անվան տակ հակաազգային գործունեություն ծավալող տարրերը՝ փիլիսոփայության դոկտոր Արամայիս Կարապետյանը, գրականության մասնագետ Արտաշես Ոսկերչյանը, հին բուլշևիկ և բանաստեղծի հավակնություն ունեցող Գուրգեն Չայկունին և մի երկու-երեք ուրիշներ, իրենց հրապարակային ելույթներով, մամուլով, Հայաստանի կենտկոմից մինչև Մոսկվաները ողողող անանուն ու անվանակիր ազդարարումներով ձեղադրում էին Հայաստանի ղեկավարությանը, որ չեն պայքարում հայ մտավորականության մեջ անարգել ծաղկող-փթթող հակալենինյան գաղափարների, նացիոնալիզմի, անցյալի իդեալականացման և ուրիշ նմանատիպ մեղքերի և դրանց կրողների դեմ, - իրենց հարձակումների գլխավոր թիրախն էին դարձրել Զրաչյա Քոչարին: Իսկ մեր Կենտկոմի բյուրոն էլ Մոսկվայից իրենց փոխանցած այդ զրպարտագրերը, ուզած թե չուզած, անվերջորեն Քոչարին «Բյուրո» կանչելու և վերևից ստացած ահազանգերը անընդհատ «քննելու և ընթացք տալու» մեջ էր:

Մենք՝ համենատաքար երիտասարդներս, որ որոշ իմաստով Քոչարի թևի

տակ էինք մեծացել և նրա գաղափարակիցն էինք, մենք էլ մեր չափով էինք ընկել «մատերիալիստների» ցուցակի մեջ: Միտս է, մի անգամ, գրողների կուսակցական ժողովներից մեկի ժամանակ հին բոլշևիկ Յայկունին ամբիոնից հնչեցրեց հետևյալ արտահայտությունը. «Միլվա Կապուտիկյանը և իր թասընկերները՝ Քոչարի ղեկավարությամբ...»: Ես և իմ «թասընկերները» Յրաչյա Յովհաննիսյանը, Սերո Խանգադյանը, Համո Սահյանը, Պարույր Սևակը, Սուրեն Աղաբաբյանը, Վահագն Դավթյանը, Յրանտ Թամրազյանը, երկար ժամանակ հիշում ու սրտանց ծիծաղում էինք մեզ տրված այդ տիտղոսի վրա: Դե, մեզ համար ի՞նչ, մենք Քոչարով մեզ մի տեսակ պաշտպանված էինք զգում, ամուր, վահանավորված: Հիշեմ թեկուզ մի դեպք: 1962-1963 թվականներին Բեյրութում էի: «Վասպուրական» հայրենակցական միության հետ հանդիպման ժամանակ դաշնակցական հին նշանավոր գործիչ, վանեցի Կոմս Փափազյանը կրծքիս փակցրեց իրենց միության «Արծիվ Վասպուրականի» ոսկյա կրծքանշանը: Լուրը հասել էր Երևան, և Արամայիս Կարապետյանը նորացած ախտբանվով վրա էր պրծել այդ թարմ «մատերիալին»՝ ամբիոնից զրնգացնելով, թե բանն ո՛ր է հասել, որ կոմունիստը հայտնի դաշնակցականից կրծքանշան է ընդունում... Քոչարն ամբիոն էր բարձրացել և այնպես, ինչպես ինքը միայն կարող էր, տեղը էր դրել Կարապետյանին՝ ասելով, թե մենք պետք է պարծենանք, որ դաշնակցական հայտնի պարագլուխներից մեկը պարզ և տալիս Կապուտիկյանին, այդ նշանակում է, որ նա խոնարհվում է մեր կոմունիստ բանաստեղծուհու առջև, ընդունում է մեր նվաճումները... Համոզվում է, թե չի համոզվում Կարապետյանը, չգիտեմ, բայց արդյունքն այն է լինում, որ հարցը փակվում է, և ինձ Երևան վերադառնալուց հետո Կենտկոմ-մենտկոմ չկանչեցին...

Քոչարը ոչ միայն վարպետ հռետոր էր, այլ նաև վարպետ ընդդիմախոս: Իր դեմ խոսողներին նա այնպիսի փաստարկներ, նշանավոր մարդկանց ասույթներ, Մարքսիզմի դասականներից այնպիսի մեջբերումներ էր գտնում, այնպիսի անսպասելի տեղերից էր դիմացինին «բռնացնում» ու բերանը փակում, որ ականա զարմանում էինք: Զարմանում էինք ընդհանրապես, թե որտեղի՞ց է գյուղական մի պուճախում ծնված ու մեծացած, ընդամենը բանֆակ ավարտած այս մարդու մեջ կուտակվել այսքան գիտելիք, այսքան սուր միտք, ինտելեկտ, այսքան արտակարգ ու բազմազան ունակություններ: Դե եկ ու առաջնությունը մի տուր Աստծու տվածին...

Սակայն արտաքնապես այդքան հաղթակազմ, սկզբունքների մեջ ամուր, վիճելիս՝ անտեղիտալի, ամբիոնի մոտ առյուծ կտրող Քոչարը ներքուստ շատ ազդվող, շատ դյուրազգաց էր, ինչպես ժողովուրդն է ասում, ցավը ներս գցող: Ըստ երևույթին, նրա վրա շատ ծանր էին նստում այդ վեճերն ու տևական ընդհարումները, Կենտկոմներ գնալը, բազմերես զրպարտագրերն ու անհեթեթ թաղաքական մեղադրանքները հերքելը, ընդդիմանալը: Եվ սիրտը տեղի տվեց... 1962 թվականի գարնանը այն ուժգնորեն կաթվածահարվեց, և Քոչարը կորցրեց երկաթե թվացող առողջությունը:

Քիչ քե շատ ապաքինվելուց հետո անդադրում գրողը շարունակեց իր գրական և քաղաքացիական բուռն գործունեությունը: Մոտենում էր 1965 թվականը, XX դարի առաջին ցեղասպանության հիսնամյակը: Բնական է, որ Քոչարի պես անձնավորությունը չէր կարող հեռու մնալ ամբողջ հայությունը տակնուվրա անող այդ եռուզեռից: Չնայած առողջական վիճակին նա գործի էր դրել իր բազմակողմանի հնարավորությունները՝ ելույթներ զանազան ամբիոններից, հրապարակագրություն, հորդոր-բացատրություններ Կենտկոմի քարտուղարներին և գաղափարական ասպարեզի աշխատողներին, մոսկովյան կապերի օգտագործում, նամակներ բազմազան հասցեներով, և այս բոլորը Մեծ եղեռնի 50-ամյակը Չայաստանում արժանավորապես նշելուն ի խնդիր:

Ինձ մոտ գտնվող թղթապանակում կա Բրեժնևին, Միկոյանին, Կոսիգինին ուղղված նամակի սևագիրը՝ թվագրված 1964 թ. հոկտեմբերի 27, Լուսակերտ: Դա այն նամակի սևագիրն է, որ հղվել է Մոսկվայի ղեկավարությանը Չայաստանի մտավորականության անունից՝ բացատրելով Մեծ եղեռնի էությունը և նշման անհրաժեշտությունը ոչ միայն հայության համար, այլ մարդկության հանդեպ գործած հանցագործությունը չմոռանալու, գոնե բարոյապես պատժելու, այլևս երբեք չկրկնվելու համար: Առանց հուզմունքի չի կարելի կարդալ այդ սևագիր, գրած, ջնջած, նորից գրած պարբերությունները՝ շարադրած մարմնական ու հոգեկան ուժերի լարմամբ, հիվանդ սրտի անխնա սպառումով: Քոչարը կարողացել է մի քանի էջում ամփոփել վիթխարի ասելիքը՝ չմոռանալով ամրացնել այն գաղափարական փաստարկուններով, քանի որ գիտե՜ր իր վրա պիտի տեղան «նացիոնալիզմի» դեմ պայքարող «տրոյկայի» ամբաստանությունները:

Պետք է ասել, որ կուսակցության Կենտկոմի այնօրյա քարտուղար Յակով Ջարոբյանն էլ արևմտահայի արդահանցի ծնողների զավակ, չնայած ծնվել ու մեծացել էր հարկովում և ուներ ռուսական կրթություն, ներքուստ հոգեպես պատրաստ էր ընդունելու օդում թևածող հայրենասիրական ալիքները, իսկ այդ ալիքների մեջ ամենագորավորը Եղեռնի 50-ամյակը նշելու վճռականությունն էր, որը առատորեն լիցքավորում էին հայ արվեստագետները, գրողները, պատմաբանները: Պարույր Սևակի «Ձանգակատունը» ղողանջում էր ողջ հայաշխարհի վրա՝ ոգևորելով բոլորին և ոգեկոչելով Չայաստանի կուսակցական առաջնորդին՝ Մոսկվայում մտնել կաթինետից կաթինետ, հանդիպել ղեկավարներին, ցույց տալ հատուկ այդ նպատակով պատրաստած՝ ջարդերը պատկերող լուսանկարների ալբոմները, ապացուցել-հորդորել-համոզել և վերջապես հասնել Եղեռնի 50-ամյակը նշելու իրավունքին...

Եթե Սևակը, Շիրազը, Գևորգ Էմինը, Վահագն Դավթյանը և մյուս պոետները իրենց եղեռնապատում բանաստեղծությունների հրետանային համագարկով նախապատրաստում էին ժողովրդին ու երիտասարդությանը՝ նորանոր տարածքներ գրավելով նրանց գիտակցության մեջ, ապա արծակը, հրապարակախոսությունը, գիտական հրապարակումները, հետիոտն զորքի պես ամրացնում էին հրետանու գրաված տարածությունը: Այդ հետիոտն զորքի հրամանատարն

էր Յրաշա Քոչարը:

Այնքան մեծ էր նրա լարվածությունը, խռովքներն ու ալեկոծությունը, որ 1964 թ. աշնանը կաթվածը այս անգամ ավելի խորը և լայնատարած, նորից գետնին զարկեց հետևակի հրամանատարին՝ օրեցօր նվազեցնելով նորից ուռքի կանգնելու հույսը: Այնպես որ, երբ եկավ 1965 թ. ապրիլը, Քոչարը այլևս ուժ չուներ լիաբուժման մասնակցելու համատարած տեղաշարժերին:

Ապրիլի սկզբներին էր, երբ կանչեց իր մոտ: Ընտապ գնացի: Թիկնած էր բարձրին, գունատ էր, ծնոտը դողդողում էր: Հարցրեց.

- Ինչպե՞ս ես:

- Ծնորհակալ եմ, լավ եմ:

- Եղպիսի գիրք ես գրել, իհարկե պիտի լավ լինես (խոսքը «Քարավանները դեռ քայլում են»-ի մասին էր), միայն թե եղ պարոն Սարգիս է, ինչ է, բեյրութցի վարսավիրը, դրան շատ ես տեղ տվել, չարժեր...

Այնուհետև ոգևորված տեղեկացրեց, որ ռուսական մամուլն արձագանքելու է Եղեռնի հիսնամյակին:

- «Պրավդայում» Վիկտոր Համբարձումյանն է գրելու, իսկ «Իզվեստիան» ինձ է հանձնարարել: Նյութերը նախապատրաստել եմ, բայց, ափսոս, չեմ կարող... Ուզում եմ, որ դու գրես... Հասնիկ, բեր, գրասեղանիս վրա է:

Հասնիկը, որ պահապան հրեշտակի պես գիշեր-ցերեկ հսկում էր հիվանդին, չնայած որ սպիտակ խալաթով հիվանդապահուհին մշտապես ներկա էր, հարևան սենյակից բերեց բավական սովոր թոթապանակը: Քոչարը վերցրեց ու հանձնեց ինձ. ձեռքերը դողում էին.

- Ահա՛, վերցրո՛ւ, մեջը Նախմ բեյի հուշերն էլ կան, հայերի տեղահանման Հալեպի կոմիտեի նախագահն է եղել...

Ես զգացված հրաժեշտ տվեցի ու տխուր դուրս եկա: Տանը եռանդով անցա գործի: Նախ, որ կենտրոնական թերթի համար էր և հետո՝ Քոչարը բոլորի մեջ ինձ էր վստահել: Գրեցի հոդվածը՝ «Ապրելու համար պետք է հիշենք» վերնագրով, ուղարկեցի Մոսկվա, բայց լույս չտեսավ: Երևի շատ էր հուզմունքի և ցասման դեղաչափը հոդվածում: Իսկ այդ տխուր տարելիցի մորմոռը ամոքելու համար «վերևներից» նախատեսել էին մի քանի դեղահատ: Ճիշտ այդպես էլ նախատեսել էին մի բարալիկ ծորակ բացել վշտի, վիրավորանքի, ընդվզման այն ջրամբարից, որ կուտակվել էր խորհրդահայ սերունդների սրտում որպես արդյունք հիսնամյա ստիպողական լուծության, Սասնա, Մուշի, Վասպուրականի, Կիլիկիայի կրակի տրված գյուղ ու քաղաքներում, աքսորի արևախամն ճանապարհներին մեռնողների հառաչները մոռացնել տալու պարտադրանքի, անտեբուրնչ մեր հողերի կորուստը սգալու հիսնամյա իրավազրկության:

Սակայն 1965 թ. ապրիլի 24-ի առավոտյան կուտակումների թափից քանդվեց վերևից արտոնված այդ բարալիկ ծորակը, և բազմությունը, հատկապես երիտասարդությունը, հորդեց, ողորդեց Երևանի փողոցներն ու հրապարակները, ծավալվեց, հասավ մինչև Կենտրոնական հրապարակ, մինչև Կոմիտասի պան-

քեռն, իսկ իրիկնամուտին դեմ առավ Պետական օպերայի պատերին ու դիմադրության հանդիպելով կոտրեց շքադռների ապակիները, ներս խուժեց միջանցքներն ու դահլիճ հաստատելու համար իր սգալու, ընդվզելու, աղաղակելու, պահանջելու իրավունքները...

Ես թե բանաստեղծությամբ, թե արծակով շատ եմ գրել այդ պատմական օրվա և դրա հետևանքների մասին, այստեղ դրանց կանդրադառնամ թեևսակիորեն: Ապրիլ 24-25-ի լույս գիշերը ոստիկանությունը գործի էր անցել. հետապնդել էին նախորդ երեկոյի խռովարարներին, մի քանիսին ձերբակալել: Թե վերևներում, թե ժողովրդի մեջ մի տեսակ շփոթություն էր տիրում: Հիսնամյակը նշելուն հետամուտ Յակով Ջարոբյանի, քյուրոյի անդամների, Պետական համալսարանի դեկավարների, Գրողների միության, Քոչարի և մյուսների դեմ առանց ունեցողները չարախնդում էին. «Տեսա՞ք, թե ինչի համգեցրեց Եղեռնի հիշատակումը, նացիոնալիզմին տուրք տալը Հայաստանում»: Մայրաքաղաքի մի քանի կոլեկտիվներ, այդ թվում և Կոմպոզիտորների միությունը, շտապեցին դատապարտել օպերայի դռները ջարդող խռովարարներին: Ես և իմ գրող ընկերները, իհարկե, այդ կարծիքի չէինք, բայց արդարացնելու մոտիվներ էլ դժվարանում էինք գտնել: Քոչարը Լուսակերտում հիվանդ պառկած էր, ուղեցույց կարժես թե չունեինք, ինչպե՞ս վարվեինք...

Իսկ մեկ-երկու օր հետո պետք է կայանար Գրողների միության կուսկազմակերպության դռնբաց ժողովը, որը պետք է գնահատական տար ապրիլի 24-ի դեպքերին: Ես, որ 50-ամյակի հիշատակման նախապատրաստելու մեջ ակտիվ մասնակցություն էի ունեցել, Բեյրութից վերադառնալուց հետո Կենտկոմին ներկայացրած հաշվետվության մեջ հատուկ նշել էի այդ մասին, Յակով Ջարոբյանի հետ կայացած հանդիպման ժամանակ նշելտել էի հիշատակման անհրաժեշտությունը, ինձ խորապես պատասխանատու էի զգում ցույցների, այդ օրվա խառնակ դեպքերի և, մանավանդ, ձերբակալված երիտասարդների բախտի համար: Որոշեցի գրել ելույթս: Ամբողջ գիշեր չքնեցի: Դժվար էր համապատասխան ձևակերպումներ գտնել՝ այդ վտանգավոր պահին տիրող կարծիքին հակադրվելու և արդարացնելու կարգը խանգարած երիտասարդներին... Հաջորդ օրը գրողների ժողովին առաջինը ելույթ ունեցա ես: Եվ եթե իմ երկարատև կյանքի ընթացքում արածս լավ գործերի մեջ մի երկու-երեքով հպարտանալու իրավունք ունեմ, դրանցից մեկը իմ այդ օրվա ելույթն էր, որը տոն տվեց ժողովի հետագա ընթացքին և օգնեց ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք մշակել Սեծ Եղեռնի հիշատակման անհրաժեշտության նկատմամբ՝ դրա կազմակերպիչների անկարողությանը վերագրելով ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունները: Այս, ինչպես և մի քանի ամիս հետո 26 կոմիսարների շրջանային կուսկոնֆերանսում ունեցած ելույթս Սփյուռքում լույս տեսած ժամանակին՝ Գերսամ Ախարոնյանի՝ Եղեռնին նվիրված հուշամատյանի վերահրատարակության մեջ, իսկ Հայաստանում միայն 32 տարի անց՝ իմ «Էջեր փակ գգրոցներից» գրքում:

Այսօրվա պես հիշում եմ այդ փոթորկալից օրերը ու նաև հիշում եմ, որ ելույ-

թիս և գրելու, և՛ ամբիոնից կարդալու պահերին ինձ ուղեկցում էր Քոչարի զինակիցը, վստահված ամձը լինելու և նրա բացակայությունը ամեն կերպ լրացնելու զգացողությունը: Երևի իզուր չէր, որ Լուսակերտում Երևան ժամանելու անկարող Քոչարը ասել էր. «Ոչի՛նչ, քանի որ Սիլվան այնտեղ է, ես հանգիստ եմ»:

Շուտով ես հնարավորություն ունեցա այս խոսքը լսել անձամբ իրենից, երբ մի երկու-երեք օր հետո սպիտակաբաժնի հյուրերի հետ այցելեցի Քոչարին: Արևմտ օր էր: Սպասածիս հակառակ հիվանդին գտանք պարտեզում ծաղկած խնձորենու բարակիկ բունը փորփրելիս: Իր տնկած ծառերն էին դեռ փոքրիկ, խնամքի կարոտ ու դրանից էլ ավելի սիրելի: Երևի դուրս էր եկել ծառերից կարոտն առնելու:

Մեզ ընդունեց լավ տրամադրությամբ, երևանյան դեպքերից ոգևորված: Ոչ պակաս ոգևորված էին հյուրերը, որոնք դաշնակցական էին և հակված էին ցույցերին հակախորհրդային, հակապետական բնույթ տալ: Մեջս որտեղից որտեղ հայտնվեց «homo SOVETIKUS»-ի բարդույթը.

- Ո՛չ, դա պարզապես երիտասարդությանը հատուկ բռնկում էր: Դե, գիտեք ամեն շարժման մեջ էլ խենթեր լինում են...

Քոչարը լրջորեն, ինձ համար բոլորովին անսպասելի վրա բերեց.

- Եղ տեսակ խենթերը պետք են, մեզ շատ են պետք...

... 1965 թվականի մայիսի 5-ն էր:

Քանաքեռի բարձունքից ոլորապատույտ ճանապարհներով Երևան էր իջնում ավտոմեքենաների մի անսովոր շարասյուն: Իջնում էր դանդաղ, սգավոր հանդիսավորությամբ: Ներքևում հայոց մայր ոստանն էր՝ ամիսների լարվածությունից հետո արդեն հանդարտած, հեռավոր անապատներում հանգչող իր ցավատանջ մեռյալների հանդեպ պարտքը հատուցած, աշխարհին ու մարդկությանը այսուհետև հպարտ ու արժանապատվորեն նայող, մայիսյան ծաղկած ծառերով ու կապույտ երկնքով պարզերես ժպտացող քաղաքը: Անցնում էր շարասյունը ժպտացող քաղաքի փողոցներով, իսկ շարասյան առջևի մեքենայում հանգչում էր նա, որ անչափ շատ բան էր արել, որպեսզի իր քաղաքը, իր ողջ ժողովուրդը հպարտ ու արժանապատվորեն նայի աշխարհին:

Թող որ դեռ վարանեն Գրողների տան պատին փակցնել Նաիրի Ջարյանի և Դրայա Քոչարի լուսանկարները: Դայոց պատմության երկար՝ Դայկ նահապետից մինչև մեր օրերը ձգվող պատկերասրահի պատին մեր մեծ խենթերի շարքում ամրորեն փակցված է այդ երկու դժվար ճակատագրի տեր, բայց հայոց ճակատագրի դարձակետային մի պահի ժողովուրդ պահած և ժողովուրդ առաջնորդած հայորդիների առտնին, հերոսական շեշտեր չունեցող, մի քիչ տխուր, մի քիչ վիրավոր, բայց միշտ հոգսով ու խորհրդով լի դիմանկարները...

24 փետրվարի 2005թ.

Երևան